

ՀՈՐԻԶՈՆ

horizon

Հ.Յ.Դաշնակցութեան դերը
1926-1930 Արարատի քրտական
ապստամբութեան մէջ



Արարատի 1926–1930 քրտական ապստամբութիւնը
Հ.Յ.Դաշնակցութիւն–Հոլբուն համագործակցութեան
եւ փարածաշրջանային զարգացումների համարեքսպում

Արամ Ս. Սայհեան

2015

Երկու խօսք

Թուրքիոյ մէջ 20-րդ դարուն տեղի ունեցած քրտական ապստամբութիւններէն կը տարբերի 1930-ի Արարատի Յեղափոխութիւնը: Այս ըմբոստութիւնը իր բնոյթին մէջ տարբեր էր 1921-ի Քոչկիրիի եւ 1925-ի Շէյխ Սայհիսի ապստամբութիւններէն: Տարբեր էր, որովհետեւ առաջին անգամ ըլլալով՝ քրտական ազատագրական պայքարին մէջ իբրև գաղափարախօսութիւն տեղ կը գտնէր անկախութեան գաղափարը եւ ինքնափար ու ազատ պետութիւն կերտելու ձգումը:

Արարատի 1926-1930 ապստամբութիւնը քիւրտ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի այն կարեւոր հանգուաւանն էր, երբ տեղի ունեցաւ արմատական յեղաբեկում անոր ինքնագիտակցութեան մէջ:

Համաքրտական ազգային կուսակցութեան՝ Հոյրունի ձեւաւորումը քիւրտ ժողովուրդի պայքարին ներարկեց քաղաքական յստակ նպատակներ ու գաղափարական նոր ուղեցոյցներ:

Այս ապստամբութեան երկրորդ առանձնայատկութիւնը կը հանդիսանայ այն իրողութեան մէջ, որ առաջին անգամ ըլլալով՝ թրքական բռնատիրութեան դէմ պայքարելու հայ-քրտական պայքարի համատեղ շարժում մը յառաջ կու գար, ուր նախին բոլոր տարածայմութիւնները մէկ կողմ կը դրուէին եւ երկու կողմերը կը համագործակցէին յանուն երկու ժողովուրդներու արդար իրաւունքներու վերատիրացման: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հոյրունի միջնեւ կնքուած պատմական դաշինքով՝ երկու կուսակցութիւնները կ'որդեգրէին Սեւրի գաշնազրի կողմէ վաւերացուած զրոյթներով առաջնորդուելու քաղաքական սկզբունքը: Այսինքն՝ երկու կողմերուն համար ալ յստակ էր, թէ ապստամբութեան բարեյաջող աւարտի պարագային, ինչ տարածքներու մէջ պիտի ընդգրկուէին ու սահմանագծուէին զոյտ պետութիւններու տարածքները:

Պատմական ուսումնասիրութեան հեղինակը՝ Արամ Սայիեանը Հայաստանի եւ Ծուսաստանի արխիւներուն մէջ յայտնաբերած է նոր արխիւային փաստաթուղթեր, որոնք առաջին անգամ ըլլալով լոյս աշխարհ կու գան ու տրամադրելի կը դառնան հասարակութեան:

Այդ փաստաթուղթերէն ամէնէն կարեւորներէն է անցնող տարիներուն Փարիզէն Հայաստան փոխադրուած ՀՅԴ գործիքի Բուլուսի (Ծուրէն Տէր Մինասեան)

անձնական արխիւր, որ այժմ կը պահուի Հայաստանի Ազգային արխիւրի թիւ 1048 պահադարանին մէջ: Վերոնշեալ արխիւրի առաջին ցուցակի 64-րդ հատուածը («Քրտական գործը Պարսկաստանի մէջ») 34 էջերէ բաղկացած տետրակ մըն է, որ գրուած է Թեհրանի մէջ, ուր գործուղուած էր Ծուրէն 1929-ի Փարիզի մէջ կայացած ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովէն բխած որոշումները գործադրման դնելու համար: Պատմական մեծ կարեւորութիւն ունեցող այս փաստաթուղթի յայտնաբերումով լոյս աշխարհ եկան շատ մը մանրամասնութիւններ ու պատմական իրադարձութիւններու մասին յստակ տեղեկութիւններ, որոնք ցարդ կը մնային անյայտ:

Հայաստանի Ազգային արխիւրի թիւ 1048 պահադարանին մէջ կը պահուի նաեւ 10 էջերէ բաղկացած՝ Ծուրէնի 1944 թուականի մարտ 8-ի նամակը Եղիպատի մօտ Խորհրդային Միութեան արտակարգ եւ լիազօր գեսազան Նիբոլա Նովիկովին, որուն մէջ հետաքրքրական փաստեր կը բերուին խորհրդային գաղտնի սպասարկութիւններուն կողմէ Արարատի ապստամբութեան ղեկավարներէն Դաշնակցական Արտաշէս Մուրագեանի Արաքս գետի ափ հրաւիրուելու ու գաւադրաբերակալուն պատմութեան վերաբերեալ:

Օգտագործուած են նաեւ ՀՅԴ Բիւրոյի «Հրայր Մարուխեան» գրադարանին մէջ պահուղ ՀՅԴ գործիք Անտրէ Ամուրեանի (Տէր Օհանեան) «Կեանքի էջեր» անտիպ ձեռագիր յուշագրութենէն արժէքաւոր տեղեկութիւններ, որոնք կ'առնչուին քրտական շարժման աջակցելու նպատակով հրանի մէջ ՀՅԴ գործունէութեան:

Օգտագործուած են նաեւ Ծուսաստանի եւ Հայաստանի պետական արխիւններէն նիւթեր, ինչպէս նաեւ ապստամբութեան մ ասնակից հայ եւ քիւրտ ղեկավարներու վկայութիւններ:

Նշենք, որ ուսումնասիրութեան հեղինակ Արամ Սայիեան այս նիւթը ներկայացուցած է պատմական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսութիւն:

Ուսումնասիրութիւնը առաջին անգամ հրատարակուած է «Վէմ» պատմագիտական հանդէսի 2014 թուականի Նոյեմբերի թիւին մէջ:

«Հորիզոն»

ԱՐԱՐԱՏԻ 1926-1930 ՔՐՏԱԿԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Հ.Յ.Դաշնակցութիւն-Հոյրուն համագործակցութեան

Եւ տարածաշրջանային զարգացումների համատեքստում

Արամ Ս. Սահիեան

Հ.Յ.Դաշնակցութեան դերը 1926-1930 Արարատի քրտական ապստամբութեան մէջ

Ներածութիւն

Արարատի 1926-1930 թթ. ապստամբութիւնը քիւրտ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի այն վճռորոշ հանգրուանն էր, երբ ցեղային հիմքի վրայ բոնկուող ինքնաբուխ շարժումներին փոխարինեցին անկախութեան համար պայքարն առաջնորդող համագրտական ազգային կուսակցութեան՝ Հոյրունի կազմակերպական ջանքերը:

Դրանում մեծ դեր խաղաց Հայաստանի առաջին հանրապետութեան անկումից յետոյ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մի շարք երկրներում հաստատուած Հ.Յ.Դաշնակցութեան քաղաքական, կազմակերպական եւ գաղափարական աջակցութիւնը: Հայոց պահանջատիրութեան եւ Քիւրտ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար, յիրաւի, ուղենչային նշանակութիւն ունեցան Արարատի ապստամբութեան արշալոյսին՝ 1927 թուականին, Հոյրունի կողմից որդեգրուած՝ Քիւրտիստանի անկախութիւնը Սերբի պայմանագրի հիման վրայ հոչակելու քաղաքական սկզբունքը եւ ընդհանուր թշնամու դէմ պայքարում հայ-քրտական տարածայնութիւնները մի կողմ դնելու վճռականութիւնը:

Արարատի ապստամբութեան ընթացքում ձեռք բերուած հայ-քրտական զինակցութեան դասերն օգտագործուեցին 1970-ականներից կրկին վերելք ապրած Սփիւրքի Զինեալ պայքարի եւ քիւրտ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ընթացքում: Այս իրողութիւնները վկայում են ընդհանուր թշնամու դէմ պայքարում երկու ժողովուրդների երկարաժամկետ համագործակցութեան լուրջ աւանդոյթների առկայութեան մասին:

Ուստի՝ ներկայումս Մերձաւոր ու Միջին Արեւելքում շարունակուող աշխարհաքաղաքական վերապասաւորումները հրամայաբար պահանջում են դասեր քաղել պատմութիւնից եւ անկեղծօրէն առերեսուել ինչպէս Հայոց ցեղասպանութեան մէջ քրտական գործոնի խաղացած զգալի գերակատարութեան փաստին, այնպէս էլ քեմալական թուրքիայի կողմից քիւրտ ժողովրդի հանդէպ իրականացուած ցեղասպանական դործութիւնների դառը հետեւանքուներին:

1. Քրտական շարժման նոր հանգրուանը

1925 թ. Շէյխ Սայիտի ապստամբութեան պարտութեանը հետեւած հալածանքների ու զանգուածային շարդերի պայմաններում քրտական շարժման առաջնորդները ստիպուած էին մտածել իրենց քաղաքական կողմնորդումների փոփոխութեան մասին, ինչի արդիւնքում քեմալական շարժման առաջնորդումների փոխարինեցին փոխադարձ օտարացումն ու թշնամանքը:

Ապստամբութիւնը ցոյց տուեց նաեւ, որ քրտերն իրենց ինքնակազմակերպման հին ցեղային-կրօնական ձեւաչափով չեն կարող դիմակայել արդիականացող թուրքիային ու նրա բանակին, որն իր պատրաստուածութեամբ եւ հագեցածութեամբ չէր զիջում եւրոպական շատ երկրների զինուած ուժերին: Քրտական վերնախաւը հասկացել էր, որ ցեղային գործելակերպն աշխարհայնացքը շարունակում են անջրպետներ ստեղծել սեփական ժողովրդի առանձին հաստածների միջեւ, իսկ թուրքերը միասնական են, ուստիեւ կարողանում են յաղթող գուրս գալ: Անհրաժեշտ էր ստեղծել մի համաքրտական կազմակերպութիւն, որն աստիճանաբար ազգային-ազատագրական պայքարի մէջ կը ներգրաւէր Քիւրտ ժողովրդի բոլոր հաստածներին:

Շէյխ Սայիտի ապստամբութեան պարտութիւնից յետոյ քրտական վերնախաւի թրքամէտ հաստածը խիստ թուղացած էր: Եւ դա մեծ մասամբ՝ թուրքերի մեղքով, որոնք մահապատճի ենթարկեցին այնպիսի ազգեցիկ գործիչների, ինչպիսիք էին Հասան Հայրին, սէյխ Ապտուլքատիրը, իսկ շատերին էլ աքսորեցին երկրի արեւետեան շրջանները՝ դրանով թուղացնելով իրենց ազգեցութիւնը քրտերի շրջանում:

Այս պայմաններում դրական երանգներ էր ձեռք բերուած քրտերի վերաբերմունքը Հայերի ու ասորիների հանդէպ, ընդ որում՝ նման երեւոյթը փոխադարձ էր: Նրանց միաւորում էին ընդհանուր ցաւն ու սպառնալիքը եւ արիւնարբութեալական բռնապետութիւնից օր առաջ ազատուելու նպատակը: Ուստի տարօրինակ չէր, որ Շէյխ Սայիտի ապստամբութեան պարտութիւնից յետոյ քիւրտ ժողովրդիները սկսեցին կապեր հաստատել նորահաստատ հայկական Սփիւրքի քաղաքական շրջանակների ու ասորիների հետ: Հայերն, ի դէմս Հ.Յ.Դաշնակցութեան, քրտերին կարող էին օգնել կազմակերպական աշխատանքներով, որոնց հարուստ փորձը կուսակցութիւնը կուտակել էր Օսմաննեան եւ Ռուսական կայսրութիւնների դէմ պայքարում, ինչպէս նաեւ դրամով, զէնքով եւ մարտական անցեալ ունեցող սպաներով ու զինուորներով: Իսկ ասորիները կարող էին աշակեցել իրենց բազմաքանակ շոկատներով:

Ի հարկէ, պնդել, թէ կողմերի միջեւ տիրում էր լիակատար վստահութիւն եւ եղայրութիւն, չի կարելի: Դեռևս թարմ էին մօտ անցեալի յշողութիւնները, բացի այդ հասղաթուղթ չգառնար թուրքերի ձեռքին եւ չվիժեցներ հայ-քրտական համագործակցութիւնը, կողմերը որոշեցին վիճելի հարցերին անդրադառնալ թուրքերի նկատմամբ յաղթանակից յետոյ:

Այդ պայմաններում քրտական վերնախաւում թրքամէտ սէյխ Ապտուլքատիրից եւ Հասան Հայրիից յետոյ մե-

ծացաւ Բաղրիսանների եւ Սեյիտ Իհկայի ազդեցութիւնը, որոնք աչքի էին ընկնում իրենց ընդգծուած հակաթրքական տրամադրութիւններով եւ հայերի նկատմամբ դրական վերաբերմունքով: Հենց նրանք էլ 1926-1927 թթ. ընթացքում բազմաթիւ հանդիպումներ ունեցան Հ.Յ.Դաշնակցութեան գործիչների հետ:

Քրտական տարբեր կազմակերպութիւնների համախմբման մէջ մեծ էր դաշնակցականների դերը: Ուստի Բաղրիսանների գլխաւորութեամբ Քիւրտիսանի բոլոր մասերից ժամանած աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդները եւ քրտական մտաւորականութեան ներկայացուցիչները, որոնք 1927 թ. օգոստոսին կազմակերպուած մի շարք տեղական ժողովներում դրել էին Հոյբուն կուսակցութեան հիմքերը (1), 1927 թ. հոկտեմբերի 5-ին համաքրտական համագումար կազմակերպեցին Լիբանանի Պհամտուն ամառանոցային բնակավայրում՝ յայտնի դաշնակցական գործիչ Վահան Փափազեանի տանը: Նրանք ներկայացնում էին քրտական այնպիսի կազմակերպութիւններ կամ կուսակցութիւններ, ինչպիսիք էին «Kurt Terkilat-i İgtimaye Cemiyeti»-ն, «Kurdistan Teal, Ceniyeti»-ն, «Kurt Millet Firkasi»-ն եւ «Kurt istiklal cemiyeti»-ն: Ժողովում կազմակերպօրէն ու գաղափարապէս վերջնականապէս բիւրեղացաւ համաքրտական «Հոյբունական» (անկախական) կուսակցութիւնը, որը պէտք է իր ձեռքը վերցնէր քրտական հարցի լուծման գործը, այդ թվում՝ գործողութիւնների կեդրոնացուած դեկավարումը: Այն ունէր Գործադիր կոմիտէ, որի անդամներն էին Սուլքէհիա, Ձեւտէթ եւ Քիամուրան Բաղրիսանները, Մեմդուխ Սելիմ պէյը, Շահին պէյը: 1927 թ. հոկտեմբերի 28-ին Հոյբունը հոչակեց Քիւրտիստանի անկախութիւնը՝ Սեւրի պայմանագրի համաձայն, ինչպէս նաև պատերազմ յայտարարեց Թուրքիային: Քիւրտիստանի ժամանակաւոր մայրաքաղաք հոչակեց Արարատի լանջերին գտնուող Քիւրտաւագիւղը, իսկ մշտական՝ Տիարակերիը (2):

Առաջին համագումարում Հոյբունը ընդունեց իր քաղաքական փլաթֆորմը, ինչը մօտակայ ժամանակների գործողութիւնների ծրագիր էր եւ բաղկացած էր 5 կէտից.

1) Բոլոր կուսակցութիւնների, ընկերութիւնների, կազմակերպութիւնների լուծարումը եւ նրանց մուտքը Հոյբուն,

2) Թուրքիայի դէմ պայքարել այնքան, մինչեւ որ նա ճանաչի քրտերի իրաւունքները սեփական հողերի վրայ,

3) ընդհանուր ապստամբութեան նախապատրաստում, ինչի համար հարկաւոր է նշանակել նոր ղեկավարի, վերակազմանորել քիւրտ ապստամբների բոլոր ուժերը ուազմական կարգապահութեամբ, սպառազինել նրանց եւ ստեղծել ապստամբութեան ընդհանուր կեդրոն,

4) Կապեր հաստատել իրանական կառավարութեան եւ կուսակցութիւնների հետ,

5) յարաբերութիւններ հաստատել իրաքի եւ Սուլքիայի կառավարութիւնների հետ այդ երկրներում բնակուող քրտերի կողմից նուաճուած իրաւունքների ամրապնդման համար, ինչպէս նաև պայմանագրային յարաբերութիւններ ստեղծել տեղի քրտական վարչակազմերի հետ՝ յայտարարելով քրտերի կողմից այդ պետութիւնների հանդէպ նոր պահանջների բացակայութեան մասին (3):

Ծուտով՝ Հոյբունի ազդեցութիւնը մեծացաւ. նրա անդամներ էին դառնում հեղինակաւոր քիւրտ առաջնորդներն ու գործիչները: Այսպէս, 1929 թ. մարտին Թուրքիայի իրենց աքսորավայրերից փախան եւ Հոյբունի ԿԿ-ի մէջ անդամագրուեցին էքրեմ եւ Քատրի Զեմիլ փաշաները (4):

Իր ստեղծումից կարճ ժամանակ անց Հոյբունը տեղափոխուեց Սուլքիայի՝ Թուրքիայի հետ սահմանակից շրջաններից մէկը, որտեղ կար հոծ քրտական բնակչութիւնների ընթացքը: Այստեղ նրա ազդեցութիւնը մեծացաւ մասամբ՝ ՀՅԴ-ի, իսկ մասամբ՝ էլ Քիւրտական իշխանութիւնների շնորհիւ, որոնք իրենց գաղութներում թոյլատրել էին Հոյբունի գործունէութիւնը: Հստ բրիտանական հետախուզութեան՝ Հոյբունականներն առաւել աշխոյժ էին իրաքի արեւմտեան եւ Սուլքիայի հիւսիսարեւելեան շրջաններում, որտեղ, բացի քրտական հոծ բնակչութիւնից, կեդրոնացել էին նաև մեծաթիւ հայ գաղթականները: Իրաքում Հոյբունի գլխաւոր ներկայացուցիչն էր Շուրքի Մեհմետը: Միւս շրջանը, որտեղ եռանդուն կերպով գործում էին Հոյբունականները, Արարատ-Բայազէտ-Մակուն էր, որտեղ գործօն էին նաև իրանի դաշնակցական գործիչները: Դա պայմանաւորուած էր Շէխի Սայիփի ապստամբութիւնից յետոյ թրքական հայածանքներից փրկուելու համար գէպի Խորհրդային Միութեան (ԽԱՀՄ) սահմանները նահանջած եւ Արարատ լերան վրայ ապստամնելով՝ 1926-ից այն քրտական շարժման հիմնական օճախի վերածած ուժերի գործունէութեան հետ:

Հյայ-քրտական դաշնակցութեան, իսկ ապագայում նաև՝ զինակցութեան հեռանկարը սկզբում անհանգստացնում էր Մեծ Բրիտանիային եւ Ֆրանսային, որոնք դրանում սեփական գաղութների՝ իրաքի ու Սուլքիայի կացութիւնն իրենց հսկողութիւնից դուրս գալու վատանգ էին տեսնում: Սակայն շուտով աւելի խոր ուսումնասիրելով իրավիճակը՝ բրիտանական հետախուզութեան բազմափորձ սպաները եղրակացրին, որ քրտերի համագործակցութիւնը հայերի հետ ստիպողական քայլ է, քանի որ նրանք ինչպէս Փինանսական, այնպէս էլ քառարային ու կազմակերպական օգնութեան մեծ կարիք են զգում:

2. ՀՅԴ-ն եւ Քրտական շարժումը

Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը քեմալական Թուրքիայի իշխանութիւնների դէմ պայքարում քրտերի հետ համագործակցութեան առաջնին գործական քայլերն արել էր գեռեւս 1924 թ., սակայն այն ժամանակ «Ազադի»-ի ղեկավարութիւնը մերժեց դաշնակցականների առաջարկը: Բայց դա չխանգարեց, որպէսզի ՀՅԴ-ն իր աջակցութիւնը ցուցաբերի Շէխ Սայիփի ապստամբութեանը: Կան վկայութիւններ այն մասին, որ ՀՅԴ ղեկավարութեան ցուցումով բազմաթիւ հայ մարտիկներ իրենց մասնակցութիւնն են բերել թուրքերի դէմ մզուած մարտերին: Ապստամբութեան պարտութիւնից յետոյ ՀՅԴ-ն ամէն կերպ աշխատում էր քրտական հարցի վրա բեւենը միջազգային հանրութեան ուշադրութիւնը: Մասնավորապէս՝ ՀՅԴ Բիւրոյի ջանքերով հուշագիր ներկայացուեց քրտական հարցի վերաբերյալ 1925 թ. Մարտէլում տեղի ունեցած միջազգային գոնկրէսին (5):

Հետագայ տարիներին ՀՅԴ օգնութիւնը քրտերին շարժունակում էր միայն աճել: Հոյբունի ղեկավարութիւնը շուտով զգաց այն օգուտները, որ տալիս էր համագործակցութիւնը ՀՅԴ-ի հետ: Ի տարբերութիւն անդիւնական ու քրտական գաղութիւնին իշխանութիւնների, որոնք, օգտուելով քրտերի անօգնական վիճակից, շահագործում էին նրանց եւ վճռական պահն թողուած անպաշտպան, ՀՅԴ-ն իր վրայ էր վերցնում պարտականութիւնների մեծ մասը՝ իրաւունքը թողնելով անորոշ ապագային վիճակից թէ յաղթանակի դէպքում քրտերը կը կատարե՞ն հայ ժողովրդի եւ ՀՅԴ-ի առջեւ ստանձնած պարտաւորութիւնները:



1927-ին Լիբանանի մէջ կապացած Հոյքունի հիմնադիր ժողովի մասնակիցներ

Դեռ չէին սպիացել Հայոց ցեղասպանութեան ու գրան հետեւած ժամանակաշրջանի վէրքերը, կոտորածների եւ փոխվրէժի ժամանակ մարդկի կորցրել էին իրենց ընտանիքներին, հարազատներին, ուստի յաճախ չէին ընդունում երէկուան թշնամու հետ համագործակցելու որոշումը: Նման վատառեսական մօտեցում կար ոչ միայն հայ ժողովրդի, այլև ՀՅԴ որոշ գործիչների մօտ: Նոյնատիպ բարդութիւնների հետ բախւում էին նաեւ Հոյքունականները, ուստի նրանց ղեկավարների ելույթները ոչ միայն ՀՅԴ-ի հանդէպ երախտագիտութեան արտայայտութիւններ էին, այլև Հայերի նկատմամբ թուրքերի կողմից դարեր շարունակ սերմանուած թշնամանքի վերացման՝ Քիւրտ հասարակութեանն ուղղուած կոչեր:

Հոյքունի առաջին համագումարի ժամանակ ընդունուած քաղաքական հոչակագրի մէջ նշում էր. «Համագումարը յայտարարում է, որ Հայաստանը եւ Քիւրտիստանը, դարերով բնակեցուած լինելով այս 2 ժողովուրդներով, հաժարւում են ենթարկուել որեւէ պետութեան եւ ձգտում են իրենց անկախութեանը: Համագումարը յայտարարում է, որ այս երկու երկրները պատկանում են միայն հայ եւ քիւրտ ազգերին»(6): Իսկ մէկ տարի անց՝ 1928 թ., Սուրէջիա Բաղրիսանը, պարզաբանելով հոչակագրի իմաստը, գրում էր. «1927 թ. հոկտեմբերին Հոյքունը քիւրտ ազգի եւ հայ ազգի ներկայացուցիչների անունից, միաւորուած լինելով ընդհանուր թշնամու թուրքերի դէմ, իրագործեցին համընդհանուր հաշտեցում: Իմ ազգի անունից ես խիզախ հայ ժողովրդին յայտնում եմ խորը համակրանք եւ վստահեցնում եմ նրան յարգանքը առ նրա օրինական ազգային ձգտումը, որը հանդիսանում է անկախ, միացեալ Հայաստանը» (ընդգծումը մերն է-Ա.Ա.) (7):

Հոյքունի միւս յայտնի առաջնորդ Զ. Սիլոփին հետագայում խոստովանում էր, որ այդ ժամանակաշրջանում Հոյքունը չունէր ոչ մի դաշնակից երկիր կամ կազմակերպութիւն, ուստի հաշուի առնելով նման հանդամանքը՝ իրենք որոշում են համագործակցել հայերի հետ: Անդրադառնալով յաղթանակի դէպքում Քիւրտիստանի եւ Հայաստանի ապագայ սահմանների յստակեցման, ինչպէս նաեւ հայերի կողմից ցուցաբերուած նիւթական օգնութեան փոխհատուցման հարցերին, որոնք բարձրացւում էին հայ-քրտական զինակցութեան հակառակորդ հայկական եւ քրտական խմբերի կողմից, նա նշում էր, որ դրանք պէտք է լուծէին ապագայ քրտական

եւ հայկական կառավարութիւնները:

Զ. Սիլոփիին առանձնայատուկ կերպով ընդգծում էր այն իրողութիւնը, որ ՀՅԴ-ի չորհին էր պահպանվում կապը Հոյքունի եւ Արարատի ապստամբների, ինչպէս նաեւ քրտական տարբեր համայնքների միջն, որոնք բնակվում էին Ասխայի, Արիբիկէի, Եւրոպայի երկրներում եւ ԱՄՆ-ում, ինչպէս նաեւ այն փաստը, որ ԱՄՆ-ում եւ Եւրոպայում լոյս տեսնող հայկական մամուլը կատարեց մեծ աշխատանք՝ քրտերի հանդէպ կանխակալ վերաբերմունքը փոխելու եւ հակաքրտական քրտողչութիւնը չէզգործացնելու նպատակով (8):

ՀՅԴ-Հոյքուն համագործակցութեան ողջ ժամանակամիջոցում ՀՅԴ-ն միայն մեծացնում էր իր կողմից ցոյց տրուող ինչպէս նիւթական, այնպէս էլ բարոյական աջակցութիւնը: Մեծ էր նաեւ ՀՅԴ-ի գերը Հոյքունի ուազմակարութեան մշակման գործում: Մասնաւորապահական գաշնակցական մաստամբութեան միակման գործում է Մասնաւորապահական ապստամբութեան Քիւրտիստանի չորս մասերի ապատագրման եւ միացեալ ու անկախ Քիւրտիստանի գաղափարից: Սա ունէր 2 դրական հետեւանք. նախ՝ մարդկային, նիւթական եւ ֆինանսական բոլոր միջոցները ծախսուելու էին թրամադրութեան միամաս թրամադրութեան միակման գործում: Միայն գաղափարից համագործական ապստամբութեան Քիւրտիստանի չորս մասերի ապատագրման եւ միացեալ ու անկախ Քիւրտիստանի գաղափարից: Սա ունէր 2 դրական հետեւանք. նախ՝ մարդկային, նիւթական եւ ֆինանսական բոլոր միջոցները ծախսուելու էին թրամադրութեան միամաս թրամադրութեան միակման գործում: Միայն գաղափարից համագործական ապստամբութեան միամաս թրամադրութեան միակման գործում է Մասնաւորապահական ապստամբութեան միամաս թրամադրութեան միակման գործում: Միայն գաղափարից համագործական ապստամբութեան միամաս թրամադրութեան միակման գործում է Մասնաւորապահական ապստամբութեան միամաս թրամադրութեան միակման գործում:

Իր կողմից ընդունուած քաղաքական ծրագրում Հոյքունը նախատեսում էր մշտական եղբայրական կապեր հաստատել բարեկամ իրանական կառավարութեան եւ եղբայրական իրանի ժողովուրդների հետ (9): ՀՅԴ գործուն միջամտութեամբ ընդունուած այս ծրագիրը հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ թիւ իրանում եւ թիւ Թուրքիայում բնակուող քրտական ցեղերը թշնամական գործութիւններ չէին վարի իրանական կառավարութեան հէմ՝ հնարաւորութիւն չտարով քեմալականներին օգտուելու նման իրավիճակից, եւ երկրորդ՝ իրանի կառավարութիւնն ինքը քրտերի հանդէպ թշնամական գործութիւններ չէր իրականացնի:

ՀՅԴ-ն քրտական պայքարին աջակցութիւն ցուցաբերելու համար ունէր սեփական դրդապատճառները.

ա) քրտական շարժումը զարգանում էր Արեւմտեան Հայաստանի տարածքում, այդ իսկ պատճառով իւրաքանչիւր հայ, ով հետաքրքրուած էր իր հայրենիքի ճակատագրով, պէտք է համակրանքով վերաբերութիւններ չէլ աջականացնից նկատմամբ,

բ) անկախ Քիւրտիստանի ստեղծումը ի չիք էր դարձնելու քեմալականների փանթրքական ծրագրերի իրագործումը,

գ) քրտական շարժումը թուրքացնում էր Թուրքիան եւ դրանով նախադրեալներ էր ստեղծում միացյալ եւ անկախ Հայաստանի ստեղծման համար (10):


ՀՅԴ-ն իր սպատակները մտազիր էր իրականացնել հետեւեալ քայլերով. անմիջապէս կազմակերպել յեղափոխական միջոցներով Թուրքիային տնտեսապէս եւ քաղաքականապէս վնասելու գործընթացը, համագործակցել քրտական շարժման հետ՝ յարաբերութիւններ հաստատելով Հոյքունի հետ եւ աշխատելով նրա շուրջը միաւորել այլ քրտական հոսանքներ, ինչպէս նաեւ համագործակցել այն աշխատելով նրա շուրջը միաւորել այլ քրտական հոսանքներ ու աշխատելով նրա շուրջը միաւորել այլ քրտական հոսանքներ ինչպէս նաեւ համագործակցել այն աշխատելով նրա շուրջը միաւորել այլ քրտական հոսանքներ

Հետ, որոնք կը հրաժարուեն միանալ Հոյբունին, Փինանսաւորել քրտական շարժումը, պայմանով, որ այդ գումարները ծախսուեն երկրում, բացի դրամական օգնութիւնից աջակցել քրտական ապստամբութեանը՝ ուղարկելով ուզմական մասնագէտ ղեկավարներ եւ խմբեր: Սակայն այդ ամէնը քրտերը կը ստանային այն դէպրում, եթէ շարժումը մնար Թուրքիայի տարածքում «...առանց տարածուելու Պարսկաստանի եւ Իրաքի սահմանների մէջ» (11):

Ուստի ընդպառաջելով քրտերի ցանկութեանը՝ ՀՅ-ն 1927 թուրականին Արարատ էր ուղարկել խնուսցի Արտաշէս Մուրադեանին: ՀՅԴ նշանաւոր գործի Ռուբէնը (Ռուբէն Տէր-Միհամեան) իր «Քրտական գործը Պարսկաստանում» արժէքաւոր գրութեան մէջ հետագայում խոստովանում էր, որ Արտաշէսը կուսակցութիւնում աչքի ընկնող ուժ էր, եւ նոյնիսկ եղել էր նրան կուսակցութիւնից վտարելու պահանջ (12): Սակայն գալով Արարատ՝ նա ամբողջովին կերպարանափոխուեց՝ դրսեւորելով բացառիկ անձնազուութիւն, ցոյց տալով, որ ինքը արտակարգ ունակութիւնների տէր անձնաւորութիւն է, որոնց չնորդիւ առ այսօր քրտերի կողմից համարում է ազգային հերոս: Արարատում Արտաշէս Մուրադեանը վերցնում է Զիլան բէկ Կամ բէյ (ըստ Ռուբէնի՝ Զելիմ խան) կերծանունը: Նրան յաջողում է միաւորել ոչ միայն Արարատի շուրջը բնակուող քրտերին եւ հաշտեցնել նրանց, այլև համախմբել Սիփանի, Պինէջի, Արտազի, Խոնուսի, Բասսէնի, Մուշից ցեղերին, իսկ որոշ ժամանակ անց, ճամբորդելով Արարատից դէպի արեւմուտք եւ հիւսիս, Արտաշէս Մուրադեանը միաւորում եւ հաշտեցնում է Կողբի, Սուրմալուի, Կարսի քրտերին: Արտաշէսի յաջողութիւնները պայմանաւորուած էին նրանով, որ նա գերազանց տիրապեսում էր քրտերէսին եւ միակն էր այդ շրջանում, ով հասկանում էր գաղափարական եւ յեղափոխական գործունէութիւնից: Քրտերը գիտէին, որ նա հայ է, եւ նրա թիկունքին տեսնում էին հայերի, առաջին հերթին՝ ՀՅԴ Դաշնակցութեան ուժը, որին շատ էին յարգում, ընդունում էին նրա հեղինակութիւնը եւ ամենակարեւորը՝ Արտաշէսն անշահամնդիր էր, կուսակցականներից ստացուած գումարները չէր իւրացնում եւ մինչեւ վերջին լուման օտարագործում էր ըստ նպատակի, քրտերի հետ հաւասար կիսում էր նրանց կրած զրկանքները (13):

Սակայն Արտաշէս Մուրադեանին պակասում էր ուագմագարական մտածելակերպը՝ ընդարձակուող շարժումը ղեկավարելու համար, ուստի նա գտաւ այն անձին, ով ունակ էր իրագործելու այդ գործը: Դա իհսան նուրին էր, ով բարձրագոյն զինուորական կրթութիւն էր ստացել Սթամպուլում, ունէր կազմակերպական փորձ, ուազմավարական եւ մարտավարական գործողութիւնների հմտութիւն: ՀՅԴ Դաշնակցութեանը յաջողում է կազմակերպել իհսան նուրիի փախուստը իրանական աքսորավայրից, եւ Արտաշէսն ու իհսանը 1927 թուրականին անցնում են Արարատ, որտեղ մինչ այդ արդէն գործում էր Բրոյի (Խպրահիմ Հըսկէ) կազմած կառավարութիւնը: Նրանց յաջողում է Բրոյին ընդունել տալ Հոյբունի ազդեցութիւնը: Դա անհրաժշտ էր նախ Հյոյբունից շնորհած միաւորական ցեղերից եւ ապա Հյոյբունի անձինքից առաջարկութիւնը: Դա անհրաժշտ էր առաջարկութիւնը կազմակերպել իհսան նուրիի փախուստը իրանական աքսորավայրից, որի առաջարկութիւնը կազմակերպել իհսան նուրիի գործում էր Արտաշէսը:

Արարատում Արտաշէս Մուրադեանը եւ իհսան նուրին, որն Արարատի կառավարութեան կողմից ստացել էր փաշայի (զօրավար) կոչում, յաջողութեամբ փոխլրացնում էին միմեանց: Իհսան նուրին ապստամբների շրջանում միակ մտաւորական եւ լայն աշխարհայեացք ունեցող անձն էր, սակայն նա չէր կարողանում կազմակերպել քրտերին. դա անում էր Արտաշէսը, որն իրագործում էր նուրիի ծրագրած գործողութիւնները: Նուրին թէեւ մարմնաւորում էր վերջե-



Նատած, ձախէն երկրորդը Կոմս,
Հոյբունի ղեկավարներու հետ

դային մտածողութիւն ունեցող քրտական մտաւորականութեանը, սակայն մի քանի պատճառներով քրտերի մօտ չունէր այն հեղինակութիւնը, որն ունէր Արտաշէս Մուրադեանը: Նամի ամենակարեւոր հանգամանքն այն էր, որ իհսան նուրին քրտերէն չփատէր, նրա կինը թուրք էր, ինչի հետեւանքով քրտերը նրա մօտ հարազատութիւն չէին տեսնում, յետոյ՝ որպէս սպայ եւ մտաւորական, իսկ նիստովագով՝ թուրք աղայ, նուրին վեհանձնօրէն էր վերաբերւում թուրք գերիների հետ, ինչը քրտերին առիթ էր տալիս մտածելու, որ նա կաշառուած է ու մի օր անցնելու է թուրքերի կողմը: Ի տարբերութիւն Արտաշէս Մուրադեանի՝ նա չէր կրում այն գծուարութիւնները, որնք տանում էին մին մնացած քերտ ապստամբները, այլ վարում էր բարեկեցիկ կեանք, որքան որ դա թոյլատրում էին պայմանները: Տուեալ փաստը նա բացատրում էր այն հանգամանքով, որ դրսից ստանում է մեծ գումարներ, որոնք օգտագործում է իր կարիքները հոգալու համար: Եւ վերջին կարեւոր հանգամանքը՝ իհսանն անձամբ չէր շրջում քրտերի մէջ եւ գգուշանում էր նրանցից, ինչը փոխադարձ կասկածներն այն սատիճան խորացրեց, որ նա պահանջեց, որպէսզի իր թիկնապահները լինեն հայերը (14):

Նման բացասական պահերով հանդերձ, չնորհիւ Արտաշէս Մուրադեանի՝ Արարատի ապստամբական օճախն իրենից ներկայացնում էր մի կուռ միասնութիւն, որն արդէն 1927 թ. ամրանը տեղի ունեցած մարտերի ժամանակ ջախչախիչ պարտութեան էր մատնել թրական զօրքերին: Դա խոր անհանգստութիւն էր առաջ բերել ինչպէս քեմալականների, այնպէս էլ խորհրդային իշխանութիւնների մօտ: Երկու կողմերի անհանգստութեան հրմնական պատճառը ՀՅԴ մասնակցութիւնն էր քրտական շարժմանը: Թուրքերը հասկանում էին, որ ՀՅԴ ունակ է բարձրացնելու եւ բարձրացնում է քրտական ապստամբութիւնը որպակասն նոր մակարդակի, ինչն անսակի գծուարացնում է քրտերի շրջանում երկպառակութիւն մերժանելու քեմալականների ծրագրերի իրականացնումը:

Ուստի պատահական չէր, որ 1928 թ. ընթացքում թուրքերին չյաջողուեց իրենց կողմը գրաւել ապստամբութեանը մասնակցող եւ ո՛չ մի ցեղի. նրանց աւարն ընդամէնը մի քանի անհատներ էին: Թուրքերի բնակչութիւն աչքում չոյքունը վարդական շարժական կայսերական թիկնապահները կազմակերպութիւն էր առաջարկութիւնը կազմակերպել իհսան նուրիի գործում թուրքերի շրջանում երկպառակութիւն մերժանելու քեմալականների ծրագրերի իրականացնումը:



Հոյրունի ղեկավարներ

բունի եւ մէկ այլ «արեւմտեան գործակալ» ՀՅԴ-ի համագործակցութեան չնորհիւ (15): Սակայն այդ գործի հրապարակումը չունեցաւ սպասուող ազդեցութիւնը, իսկ թրքական կառավարութեան համար իրավիճակն օրեցօր աւելի էր բարդանում:

3. Արարատի ապստամբութիւնը եւ խորհրդա-իրական յարաբերութիւնները

ՀՅԴ-ի ազդեցութիւնը Թուրքիայի քրտական ցեղերի վրայ այնքան մեծ էր, որ յաջողուեց վիճեցնել քրտական շարժումն իրենց վերահսկողութեան տակ վերցնելու եւ այն իրանի ու ՄԵծ Բրիտանիայի գէմ ուղղելու խորհրդային զեկավարութեան փորձերը: Բայց քանի որ Արարատում իրավիճակին տիրապետում էր ՀՅԴ-ն, նրա դէմ թշնամնքի հողի վրայ նորից տեղի էր ունենում ոռուս-թրքական մերձեցում, որն իր սուր սայրով ուղղուած էր առաջին հերթին հայքական դաշնքի գէմ, սակայն վտանգ էր սպասուում նաեւ իրանին եւ իրաքին: Բոլշեվիկների տագնապն էլ աւելի մեծացաւ, երբ յայտնի դարձաւ, որ դաշնակցականներն Արարատն օգտագործում են իրեւ յենակէտ՝ Խորհրդային Հայաստան իրենց մարդկանց ուղարկելու, ինչպէս նաեւ այստեղ թաքնուած կուսակիցներին հակառակ ուղղութեամբ տարհանելու նպատակով: Ապստամբութեան յաջողութեան դէպում, բնականաբար, սահմանամերձ շրջաններում մեծանալու էր ՀՅԴ ազդեցութիւնը, ինչն, անկասկած, անարձագանգ չէր մնայ Խորհրդային Հայաստանում:

Շուտով խորհրդային ՕԳՊՈւ-ին (Միացեալ պետքարշութեանը) յաջողուեց պարզել, որ ապստամբութեան իրական կազմակերպիչը ՀՅԴ անդամ Արտաշէս Մուրադեանն է: Խորհրդային յատուկ ծառայութիւններին, հայազգի չեկիստների շնորհիւ, 1928 թ. սկզբին յաջողուում է կապ հաստատել Արտաշէս Մուրադեանի հետ եւ ներշնչել, թէ իբր Խորհրդային իշխանութիւնները աջակցում են քրտերի պայ-

քարին եւ համոզել նրան իջնել Արարատից ու անցնել Խորհրդային Հայաստան՝ զինամթերք եւ նիւթական ու ֆինանսական օգնութիւն ստանալու նպատակով: Սակայն սահմանն անցնելուն պէս Արտաշէս Մուրադեանին ձերքակալում են Սադարակում եւ աքսորում Վորկուտա քաղաքը (17): Նրա հետագայ ճակատագիրն առ այսօր մնում է անյայտ:

Սակայն չեկիստների համար ակնյայտ էր, որ Ա. Մուրադեանի ձերքակալումով ինդիրը լուծուած համարել չի կարելի, քանի որ դաշնակցականների ազդեցութիւնը կայուն էր, նրանք կարող էին եւ անպայման կ'ուղարկէին նոր մարդու, ինչպէս նաեւ նիւթական ու ֆինանսական միջոցներ: Անհրաժեշտ էր ոչնչացնել դաշնակցական կեղոնը Պարսկաստանում՝ այդպիսով թուլացնելով Արարատի քրտերին եւ չէպոքացնելով Խորհրդային Հայաստանի սահմանների մօտ դաշնակցականների գործունէութիւնը:

Ազգբնական շրջանում խորհրդային իշխանութիւնները դիւանագիտական ճանապարհներով պահանջում էին իրանական իշխանութիւններից՝ իրանի ատարածքում փակել ՀՅԴ-ն, նրա անդամներին կամ ձերքակալել, կամ էլ արտաքսել երկրից, իսկ զեկավարներին ոչնչացնել: Բայց այդ՝ բոլշեվիկները շահից պահանջում էին գործօն քայլեր ձեռնարկել Արարատի ապստամբներին ոչնչացնելու ուղղութեամբ, ինչպէս նաեւ՝ հասնել հայերի տեղաշարժի արգելմանը Մակուի եւ Ուրմիայի շրջաններում:

Սակայն նեզա շահը եւ նրա շրջապատը հոյակապ գիտէին, որ բոլշեվիկները եւ քեմալականները իրանում իրականացնում են քայլերիչ գործունէութիւն՝ Թուրքիայի եւ իրանի քրտական ցեղերին սազերելով պատերազմական գործութիւններ վարել Թեհրանի կեղոնական կառավարութեան դէմ: Ուստի ակնյայտ էր, որ դաշնակցականների ներկայութեան վերացումով վերանալու էր քրտերի վրայ իրանամէտ ուժի ազդեցութիւնը, եւ նրանք անմիջապէս կ'ընկնեն քեմալականների ուղղեցութեան տակ:

Բայց այդ՝ դաշնակցականները լուրջ խոչընդուն էին իրանում բոլշեվիզմի տարածման ճանապարհին, ինչն էպէս նուազեցնում էր նրա ազդեցութիւններ երկրի հիւսիսյային եւ հիւսիսարեւմտեան շրջաններում: Իսկ այդ ազդեցութիւնը թիւուածնի պէս անհրաժեշտ էր Խորհրդային Ռուսաստանին, քանի որ իրանը նրա մերձաւորաբեկելեան քաղաքականութեան անկիւնաքարային երկրին էր, առանց որի այդ քաղաքականութիւնը զատապարտուած էր ձախողման: Իրանը խաչերուկ էր Միջին Արեւելքի, Կեղոնական Ասիայի եւ Հարաւային Ասիայի (այսինքն՝ բրիտանական գաղութ Հնդկաստանի) միջեւ, ուստի իշխել այդ երկրում նշանակում էր ապահովել կովկասեան եւ միջնասիական խորհրդային հանրապետութիւնների լիակատար վերահսկողութիւնը, եւ միաժմանակ՝ կարել բրիտանական գաղութներ Հնդկաստանի եւ իրաքի միջեւ ցամաքային ու օդային կապը՝ սպառնալով նրանց անվտանգութեանը:

Այդ նպատակներն իրականացնելու եւ իրանում իրազեցութիւնն ամրապնելու համար Խորհրդային Միութիւնն ունէր Յ տիպի լաւակներ՝ ուղղմաքալաքական, տնտեսական եւ ազգային: Ընդ որում՝ խորհրդային դիւանագիտութիւնը ցանկանում էր իրանում շարունակել ցարական Ռուսաստանի քաղաքականութիւնը, սակայն աւելի կոպիտ ձեւերով, ինչը բխում էր նրա ուղղմական թուլութիւնից: Այդ խոկապտակ յաջողութեան վարում էր ծայրայել տնտեսական քաղաքականութեանը յատուկ ծառայութիւն, որն աւելի շատ յիշեցնում էր առեւտրական պատերազմները: Բոլշեվիկները անբարեխղծութէն օգտում էին այն հանգամանքից, որ իրանը եւրոպական շուկային կապող միակ երկաթուղային ճանապարհն անցնում

Էր Խորհրդային Միութեան տարածքով եւ պարբերաբար շանթաժի էին ենթարկում իրանական կառավարութեանն ու վաճառականներին՝ նրանցից պահանջելով միակողմանի զիջումներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հարցերում:

Ցանկանալով նուագեցնել բոլշեվիկների ճնշումը իրանական կառավարութեան վրայ, բրիտանացիները առաջարկեցին կառուցել Հիւսիսային Իրան (Թաւրիկ)-Տրապիզոն երկաթագիծը, որպէս Զուլֆա-Պաթում երկաթագծի այլընտրանք: Առաջարկը հաւանութեան արժանացաւ ինչպէս Ռեզա շահի, այնպէս էլ Մ. Քեմալի կողմից, ով մեծապէս շահում էր այդ երկաթագծից ինչպէս ապրանքաշրջանառութեան ծաւալների մեծացման, այնպէս էլ ուզմական փոխադրումների տեսանկիւնից: Դա հնարաւորութիւն կը տար նաեւ թրքական զօրքերին աւելի արագ ճնշել քրտական ասպատամբութիւնները եւ վերացնել խորհրդային զօրքերի ուզմական առաւելութիւնները, որը նրանք ունեին Պաթում-Թիֆլիս-Լենինական-Երեւան-Զուլֆա երկաթագծի շնորհիւ:

Բոլշեվիկների զայրոյթն էլ աւելի մեծացաւ, երբ բրիտանացիները Ռուբմիա լճում իրանական բանակի համար սկսեցին ստեղծել ուզմական նաւատորմ: Բացի այդ՝ նրանք թոյլտութիւն ստացան Իրանի հարամ-արեւմուտքի նաւթային հարուստ շրջաններում կատարել նաև թի արդիւնահանում եւ իրաքից Հնդկաստան ձգուող ճանապարհի վրայ կառուցել օդակայաններ՝ բրիտանական այդ երկու գաղութների միջեւ թոփչքներ իրականացնող ինքնաթիւնները վերալիցքաւորուելու նպատակով: Խորհրդային գիւտանագէտները անընդհատ բողոքներ էին ներկայացնում իրանական կառավարութեանն այս քայլերի դէմ, սակայն Ռեզա շահը, լաւ հասկանալով, որ Խորհրդային Միութիւնն ի վիճակի չէ զէնքով ստիպել կատարելու իր պահանջները, կտրականապէս մերժեց նրանց: Աւելին՝ իրանական կառավարութիւնն ինքը իրանցի առեւտրականների դէմ ստեղծուող արհեստական խորչնուսուների հետ կապուած վճռական բողոք ներկայացրեց Մոսկուային՝ սպառնալով վերջ գնել խորհրդա-իրանական տնտեսական կապերին: Մոսկուան ստիպուած էր առժամանակ զիջել, մինչեւ որ իր ուժերը կը բաւականացնէին իրանի հանդէպ կոշտ քաղաքականութիւն իրականացնելու համար (18):

Անյաջողութիւններ կրելով ուզմաքաղաքական եւ տնտեսական ճակատներում Մոսկուան փորձում էր խաղի մէջ մտցնել ազգային խաղաքարտը: Սակայն այստեղ էլ յաջողութիւնները չնշին էին, քանի որ Աստրավատականի ազերիները գտնուում էին քեմալականների ազգեցութեան տակ, իսկ նրանց շահերը ներկայացնող «Մուսաւաթ» կուսակցութեան կերպունակայանը տեղակայուած էր Սիմավուլում: Բնականաբար, քեմալականները երբեք թոյլ չէին տայ, որ իրենց թուրանի հետ կապող այդ ուզմաքարական կամրջի վրայ բոլշեվիկներն ազգեցութիւն ձեռք բերէին: Իսկ ինչ վերաբերում է իրանական քրտերին, ապա այս հարցում քեմալականները որոշ դէպքերում գնում էին համագործակցութեան, քանի որ դա բխում էր երկուսի շահերից: Սակայն քեմալականները փորձում էին քրտերին սալլըել իրանական կառավարութեան եւ բրիտանացիների դէմ եւ նրանց հետ համագործակցելով՝ մտապէս պահել զարկերակի վրայ, որպէսզի քրտերի շրջանում չուժեղանար խորհրդային ազգեցութիւնը:

Ուստի խորհրդային գեկավարութիւնը նախապէս ՕԳ-ՊՈւ-ի առջեւ պահանջ էր զրել կարճ ժամանակահատուածում իրանում ստեղծել յուսալի գործակալական ցանց, որը պէտք է իր մարդիկ ունենար պետական համակարգում եւ նրանց միջոցով ձեռք բերէր անհրաժեշտ տեղեկութիւններ ու



Արտաշէս Մուրադեամը եւ Խարահիմ Հըսգէ Թէլլին (Բրո)

տարածէր Մոսկուայի ազգեցութիւնը: Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար օգտագործուում էր ինչպէս օրինական հետախուզութիւնը՝ խորհրդային գիւտանագիտական եւ առեւտրական ներկայացնութիւնների միջոցով, այնպէս էլ ոչ օրինական գործունէութիւնը, երբ ՕԳՊՈւ-ի աշխատակիցները կեղծ փաստաթղթերով հաստատուում էին իրանի որեւէ քաղաքում ու սկսում էին հաւաքագրել գործակալներ՝ հիմնականում նախկին Ռուսական կայսրութեան հպատակներից, որոնք յեղափոխութիւնից յետոյ հաստատուել էին այստեղ:

Ռեզա շահը չէր ցանկանում թուրքերի եւ բոլշեվիկների թելագրանքով փակել ՀՅԴ-ն՝ ինքն իրեն զրկելով նման կարեւոր դաշնակցից: Սակայն իրանն այն ժամանակ չափացն թոյլ պետութիւնը էր եւ չէր կարող դիմակայել խորհրդա-թրքական միացեալ սպառնալիքներին: Բացի այդ՝ յանուն դաշնակցականների, Ռեզա շահը չէր ցանկանում գտնուել Մոսկուայի հետ եւ չափազանց խոցելի դառնալ Մեծ Բրիտանիայի առջեւ, որից եկող փանգն աւելի իրական էր, քան բոլշեվիկնեան Ռուսաստանինը: Նոյնը վերաբերում էր թուրքիային, քանի որ շահը լաւ գիտակցում էր, որ քրտերի ապստամբութիւնը ճնշելու համար, որի մէջ գործնապէս մասնակցում էին դաշնակցականները, քեմալը կանգ չի առնի ոչնչի, այդ թուում՝ իրանի տարածք ներխուժելու առջեւ:

Սկզբնական շրջանում պատախանելով խորհրդային գիւտանագէտների՝ իրանի տարածքում դաշնակցականների ու նրանց մարտական ջոկատների գործունէութեան թոյլտուութեան դէմ բոլորքին՝ իրանցի պաշտօնեաներն ամէն կերպ հերքում էին դրանց գոյութեան փաստը, իսկ դաշնակցական գործիների համար պատախանում էին, որ նրանք իրանում են գտնուում որպէս քաղաքական տարագիրներ՝ օգտուելով պարսիկ ծոլովը գիւրասիրութիւնից, եւ քաղաքականութեամբ չեն զբաղւում (19): Հասկանալի էր, սակայն, որ այդպիսի պատախանները ամենեւին էլ չէին գործնելու բոլշեվիկներին:

Ուստի իրանական իշխանութիւնները որոշեցին դիմել խորամանկութեան. արտաքուստ նրանք թշնամական դիրք

բռնեցին ՀՅԴ-ի ու քրտերի հանդէպ, սակայն ներքուստ ցանկանում էին, որ քրտերը հաւատարիմ մնան իրենց եւ սեփական պատերազմը վարեն բացառապէս թուրքիայի տարածքում։ Այս երկդիմի քաղաքականութիւնը տեղական պաշտօնեաների համար ստեղծեց խուսանաւելու մեծ հնարավորութիւն, ուստի վերջիններս վարում էին այնպէս, ինչպէս որ իրենք ցանկանում էին՝ չվախենալով թեհրանի վերաբերմունքից։ Նրանք բաժանուեցին երկու խմբի առաջնորդ կողմակից էր պաշտօնական, իսկ երկրորդ խուսառը՝ ոչ պաշտօնական տեսակէտին։

Առաջին խմբի մէջ մտնում էին հիմնականում թուրքալեզու քաղաքացիական եւ զինուորական պաշտօնեաները, որոնք փանթրքական գաղափարախօսութեան ջատագովներ էին, կամ այն պաշտօնեաները, ովքեր կողմնակից էին բոլշեւիկների հետ մերձեցմանը, կամ էլ ուղղակի գնուած էին նրանց կողմից։ Իրենց իրաւասութիւնների սահմաններում նրանք հալածում էին հայերին, յատկապէս՝ դաշնակցականներին, իսկ քրտերի հանդէպ վարում էին շատ դաժան քաղաքականութիւն՝ ընդհուպ ամբողջ ցեղերի աքսորներն ու բնաջնջումները։ Նրանցից էին, մասնաւորապէս, գորավար նախիջեւանսկին եւ իրանական Ատրպէյճանի նահանգապետը։

Երկրորդ հոսանքը, որը պիտաւորում էին շահը եւ իրանական զօրքերի ընդհանուր հրամանատար ձափար Տովլէն, ի հարկէ, գոհ էր, որ ՀՅԴ-ի շնորհիւ տեղի քրտերին յաջողուեց դուրս հանել թուրքերի ու բոլշեւիկների ազդեցութիւնից եւ պատերազմը տեղափոխել թուրքիայի տարածք, եւ որ ՀՅԴ-ի շնորհիւ Հիւսիսային իրանում չէղոքացւում է փանթրքական եւ բոլշեւիկնան քայլայիշ գործունէութիւնը (20)։

Սակայն ցաւալին այն էր, որ շահը եւ նրա համախոհները ոչ մի աջակցութիւն չէին ցուցաբերում ՀՅԴ-ին, իսկ ահա առաջին հոսանքի կողմնակիցները բացայայտօրին դիմում էին հալածանքների, որին շահը չէր կարողանում առարկել՝ լինելով իր իսկ կողմից հրապարակուած պաշտօնական տեսակէտի գերին։ Արդիւնքում՝ Ատրպատականում մկմում է հայերի հալածանքը, արգելում է նրանց մուտքը Մակու, բազմաթիւ քրտեր եւ դաշնակցականներ են ձերբակալում, իսկ Սալմասատ եւ Ուրմիա քաղաքների դաշնակցականներն աքսորուում են։

Թաւրիզում տեղական իշխանութիւնները Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանից եւ տեղի ՀՅԴ մասնաճիւղից պահանջել էին իրենց յանձնել Արտաշէս Մուրագեանին։ Սակայն, ինչպէս նշուեց, նա չուտափ ձերբակալում է բոլշեւիկների կողմից՝ Սադարակում ընկնելով Մակուի խորհրդային հիւսատոսի եւ նախիջեւանի ՕԳՊՈւ-ի կողմից լարուած թակարդի մէջ (21)։ Դրանց յետոյ հաւանաբար վերջիններիս տեղեկատուութեան հիման վրայ իրանական իշխանութիւնների կողմից ձերբակալում է Արտաշէսի նամակատարը՝ Թաւրիզի կոմիտէին ուղղուած Արտաշէսի նամակներով հանդերձ, որտեղ նա յայտնում էր ապստամքներին սպառազինութեամբ օգնելու բոլշեւիկների պատրաստակամութեան մասին։ Այս փաստը խիստ բացասաբար ազդեց ՀՅԴ-ի հեղինակութեան վրայ, քանի որ իրանական կառավարութիւնը սկսեց կասկածել դաշնակցականներին բոլշեւիկների հետ գաղտնի կապերի մէջ, որոնք իբրև ուղղուած էին իրանի ինքնիշխանութեան դէմ։

Մինչ այդ՝ ցանկանալով վերջնականապէս փակէլ ՀՅԴ Դաշնակցութեան հարցը՝ խորհրդային իշխանութիւններն իրենց դիւսանագիտական ներկայացուցիչների եւ մասնաւորապէս՝ Թաւրիզում խորհրդային հիւսատոս Դաւթեանի միջոցով իրանական կառավարութեանն էին ներկայացրել ՕԳ-

ՊՈւ-ի կողմից ձեռք բերուած տեղեկութիւնները՝ դաշնակցականների եւ քրտերի, ինչպէս նաեւ Փարիզում գտնուող ՀՅԴ Բիւրոյի եւ իրանի տարբեր քաղաքների գաշնակցական կոմիտէների միջեւ եղած գաղտնի նամակագրական կապի մասին։ Որքան Էլ զարմանալի լինի՝ իրանում գործող ՕԳ-ՊՈւ-ի աշխատակիցների մեծ մասը հայեր էին, որոնց ղեկավարն էր բազմափորձ եւ հմուտ Գէորգի (կամ Գրիգորի) Աղաբէկովը (իսկական ազգանունը՝ Յարութիւնով)։

Նախապէս ՕԳՊՈւ-ն տեղեկութիւններ ունէր, որ ՀՅԴ Թաւրիզի կոմիտէն ոչ միայն օգնում է քրտերին, այլեւ կապեր է պահպանում Խորհրդային Հայաստանում թաքնուած իր կուսակիցների, ինչպէս նաեւ այլ ընդգիմապէի ուժերի հետ՝ պարբերաբար այնտեղ ուղարկելով իր մարդկանց, որոնք բերում են ոչ միայն նամակներ, այլեւ գումար՝ ընդյատակեայ գործունէութիւնը շարունակելու համար։ Այդ նամակները ձեռք բերելու գործը Աղաբէկովը յանձնարարել էր թաւրիզ գործուղուած ՕԳՊՈւ-ի աշխատակից Մինսկսեանին։ Խորհրդի բարդութիւնն այն էր, որ ՀՅԴ ողջ նամակագրութիւնը գոտաւորուած (code) եւ գաղտնագերծուած էր եւ բացի այդ՝ գրուած էր քիմիական թանաքոն։ Սակայն Մինսկսեանին յաջողուում է իմանալ քոտը եւ քիմիական թանաքի բաղադրութիւնը, իսկ որոշ ժամանակ անց նաեւ կաշտու թաւրիզի նամակատան բաժանմունքի պաշտօնեաներից մէկին, որը նրան տալիս էր գանձնակցականների եւ մուսաւաթականների նամակները պատճէներ հանելու նպատակով (22)։

Այսպիսով՝ չեկիստները գեռեւս մինչեւ Արտաշէս Մուրագեանի ու նրա նամակատարի ձերբակալութիւնները, գիտէին իրանում Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութեան նպատակների մասին, քանի նախապէս նրանց ձեռքն էին անցել եղիշէ հշանեանի գեկուցագրերը ՀՅԴ Փարիզի ղեկավարութեանը, որտեղ նա յայտնում էր Արտաշէս Մուրագեանի Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը գաղանցական ընդհատակեայ կառոյցի մասին։ Այս տեղեկութիւնների հիման վրայ գեռեւս 1927 թուականին Թիֆլիսում գտնուող Անդրքեդիրացիայի Պետքաղվարչութիւնը բացայատել էր Խորհրդային Հայաստանում Վրաստանում ու Լեռնային Ղարաբաղում գործող ՀՅԴ ընդյատակեայ կառոյցը եւ ձերբակալել նրա անդամներին (23)։

Ուստի Ե. Խշանեանի եւ Ա. Մուրագեանի, ինչպէս նաեւ Փարիզի միջեւ նամակագրութիւնը թաւրիզում խորհրդային հիւսատոս Դաւթեանը տրամադրել էր իրանի ամենապետքի նախարարին՝ Թէյմուրթաշին։ Այդ նիւթերը յանձնուեցին նաեւ Թաւրիզի թրքական հիւսատոսին, եւ թրքական կողմը ստացաւ չատ կարեւոր տեղեկութիւններ Արարատի ապստամբութեանը գանձնակցականների մասնակցութեան վերաբերեաւ (24)։

Այսպիսով՝ խորհրդային եւ թրքական իշխանութիւններն ունէին անձերեկելի ապացույցներ իրանի տարածքից իրենց երկների դէմ իրականացուող գործողութիւնների մասին, եւ իրանական կառավարութեանը ոչինչ չէր մնում անելու, քան արդէն պետք նախական մակարդակով վերսկսելու դաշնակցական դաշնութիւնը գործուուղի ու ապացույցը լուսաբարձր էր յատկապէս գաշնակցականների գաղտնի նամակագրութիւնը եւ առանց իրենց իմացութեան՝ հարեւան երկների տարածքում իրականացուող գործողութիւնների մասին տեղեկատուութիւնը։

Իրանի կեդրոնական եւ տեղական իշխանութիւնների կողմից սկսուած հալածանքները ծանր կացութեան մէջ զիրին ՀՅԴ ղեկավարութեանը Տեղի ունեցաւ Բիւրոյի նիստ, որի ժամանակ որոշուեց Արտաշէս Մուրագեանի օգնութեանը գործողութիւնը պահպանութեան վերաբերեաւ

շարունակելու նպատակով կասեցնել ցանկացած շփում իրանի տարածքից, սակայն Բիւրոն չդադարեց ապստամբներին օգնել թուրքիայի դէմ պայքարում: Այդ նպատակով ՀՅԴ Բիւրոն պաշտօնապէս քիւրտ ապստամբներին օգնութիւն ցուցաբերելը պէտք է վերցնէր իր վրայ եւ իրագործէր այն իր ներկայացուցի միջոցով: Իսկ տեղի դաշնակցական կոմիտէները եւ Արքապատականի թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը պէտք է իշխանութիւններին բացատրէին, թէ քրտերին օգնում է Բիւրոն, եւ իրենք անկարող են ինչ որ բան անել, իսկ ծածկագիր նամակների հետ կապուած, նրանք պէտք է Հաղորդէին, որ ծածկագիրը գտնուում է Փարիզում եւ նրանի իրանի դեսպանի միջոցով կ'ուղարկեն այն: Այդպիսով ՀՅԴ-ն քայլ էր կատարում սրուած յարաբերութիւնները մեղմացնելու նպատակով, քանի որ վատահ էր, որ իր նամակներում արտայայտուած չէր որեւէ հակաիրանական միտք:

Միեւնոյն ժամանակ՝ դաշնակցական գործիչները փորձում էին համոզել իրանական իշխանութիւններին, որ նախ՝ քրտական շարժումը գոյութիւն ունի անկախ ՀՅԴ գիրքորոշումից, եւ քանի որ կուսակցութիւնը թուրքիայում ունի քաղաքական շահեր, ապա իրենք քրտերին դիմում են որպէս բնական դաշնակցներ, բայց միայն՝ թուրքիայի սահմաններում, երկրորդ՝ քրտերն ունեն սադրողներ, ի դէմ ըոլշեւիկների եւ քեմալականների, որոնք ցանկանում են նրանց ուղղել իրանի դէմ, սակայն ՀՅԴ ներկայութիւնը ի չիք է դարձնում այդ ծրագրերը, եւ վերջապէս՝ Արտաշէս Մուրադեանի ձերբակալութիւնից յետոյ Հ.Յ. Դաշնակցութիւնը Արարատում չունի եւ ոչ մի ներկայացուցիչ (25): Այդ պարզաբանումը ուղարկուեց թէրան ու թէեւ որոշ զինուորական պաշտօնեաներ համամիտ էին դաշնակցականների հետ, սակայն իշխանութեան վերին օղակի՝ շահի եւ կառավարութեան պատասխանն ուշանում էր: Այս հանգամանքն էլ աւելի էր բարդացնում առանց այդ էլ լարուած իրավիճակը՝ կապուած Արարատի շուրջը թրքական բազմաքանակ զօրքերի տեղակայման, Արքապատականի հայութեան վատթարացող վիճակի եւ կողեկտիվացման հետեւանքով Անդրկովկասում ու մասնաւորակի Խորհրդային Հայաստանում սկսուած լուրջ շարժումների հետ:

4. ՀՅԴ-ի համագործակցութիւնն իրանի իշխանութիւնների հետ Արարատի ապստամբութեան շրջանում

1929 թ. մարտի 17-ին իր աշխատանքները սկսած ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովը յատուկ ուշագրութիւն դարձրեց հայ-քրտական գինակցութեան խնդրին եւ իրանի հետ բարեկամական յարաբերութիւնները պահպանելու անհամեշտութեանը: Ժողովում քննութեան ենթարկուած քաղաքական հարցերի՝ Սրբոն Վրացեանի կազմած ընդարձակ ամփոփագրում նշուում էր. «Քիւրտ ժողովրդի պայգային զարթօնքը, քրտական ազատագրական պայքարը իրերի տրամաքանութեամբ ուղղուած է թուրքիայի դէմ, որովհետեւ այստեղ է Քիւրտիստանի ազատութեան բանալին: Այս հողի վրայ քրտական եւ հայկական շահերը զուգագիպում են, եւ քաղաքական մեծ սխալ կը լինէր, եթէ այդ երկու ժողովուրդների կենդանի ուժերը չշանային ստեղծել պայքարի մէկ ճակատ: Այդ ճակատը ուղղուած պէտք է լինի միայն թուրքիայի դէմ եւ չպիտի ծաւալուի Պարսկաստանի եւ իրաքի սահմաններում: Քրտական գործի յաջողութիւնը հէնց թելագրում է այդ, մի բան, որ թուում է, թէ քիւրտ դեկարներն էլ ըմբունել են լաւ (ընդգծումը մերն է-Ա.Ս.) (26):»:


11-րդ Ընդհանուր ժողովի որոշումներն ի կատար ածելու եւ իրանական կառավարութեան հետ առաջացած խնդիր-

ները հարթելու նպատակով 1929 թ. վերջին կեղծ անձնագրով թէրան է ուղեւորւում Ռուբէնը (Տէր-Մինասեան) եւ տեղ հասնելուն պէս տեսակցութիւն է խնդրում պալատական նախարար Թէյմուրթաշից, որին համարում էին իրանի փաստացի կառավարիչը: Թէյմուրթաշն անմիջապէս ընդառաջեց նրան եւ հանգիպման ժամանակ շարադրեց իրանական իշխանութիւնների տեսակցաները հայերի, բոլշեվիկների, քրտերի եւ թուրքերի վերաբերեալ, ըստ որոնց՝ իրանը բնական էր համարում Հայաստանի անկախութիւնը կամ դրա իրագործման հետապնդումը, եւ եթէ հայերն իրենց առջեւ չէին զնում Պարսկահայաստան ստեղծելու նպատակ, ապա Հայաստանի անկախութիւնը դէմ չէր իրանի շահերին: Անդրադառնալով հիւմսային հարեւանի հետ փոխարաբերութիւններին՝ Թէյմուրթաշն ընդգծում էր, որ բոլշեվիզմը վտանգաւոր է իրանի ներքին կեանքի համար, իսկ շնորհի Հ.Յ. Դաշնակցութեան՝ կանխւում է նրա տարածումը իրանում: Սակայն իսորդացին իշխանութեան գրացիութիւնը աւելի նպատառ է իրանի շահերին, քան ցարական Ռուսաստանինը: Այդ իսկ պատճառով իրանական կառավարութիւնը դէմ է, որպէսզի ՀՅԴ գործունչութեան պատճառով վատանան խորհրդացութեանը աւագանը յարաբերութիւնները: Իսկ դա նշանակում էր նաեւ, որ իրանը դէմ էր Կովկասի սահմաններում վերջինիս հակաբոլշևիկնեան գործունչութեանը: Գալով քրտական խնդրին՝ Թէյմուրթաշը նշեց, որ իրանը բացասաբար է վերաբերուում քրտական շարժմանը, քանի որ թէեւ նրանք պարագիների ցեղակիցներն են, սակայն ցանկանում են իրանի տարածքի մի մասն անջատել նրանից եւ ստեղծել Քիւրտիստան:

Այդ իսկ պատճառով ցանկալի չէ քրտերին միաւորել մէկ կուսակցութեան մէջ, եւ պաշտօնական թէրանը կտրուկ դէմ է ինչպէս իր տարածքում Հոյբունի գործունչութեանը, այնպէս էլ Դաշնակցութիւն-Նոյբուն համագործակցութեանը: Իսկ ինչ վերաբերուում է թուրքերին, ապա, ըստ նրա, իրանական կառավարութիւնն, ի հարկէ, տեղեալ է Արարատական կառավարութիւնն, աւագի գործունչութեանը: Գալով քրտական խնդրին՝ Թէյմուրթաշը նշեց, որ իրանը բացասաբար է վերաբերուում գերբորոշումը բխում է պարսիկների շահերից, բայց ցաւալի է, որ Թուրքիայի արեւելեան նահանգներում հայեր արդէն չկան, եւ իրանի ցանկութիւնն է արեւելեան նահանգներում քրտերին փոխարինել հայերով, որը, սակայն, գործնականում անհնար է (27):

Ռուբէն իր հերթին Թէյմուրթաշի հարցերին տուեց սպառիչ պատասխաններ, որոնք դէմ չէին իրանի շահերին: Կապուած իրանական կառավարութեան՝ հայերի կողմից Պարսկահայաստան ստեղծելու մտավախութեան հետ՝ Ռուբէն ամենայն պատասխանառութեամբ յայտարարեց, որ չկայ ոչ մի Պարսկահայաստանի հարց, եւ եթէ հայերից որեւէ մէկը առաջադրի նման խնդրի, ապա ՀՅԴ-ն պատրաստ է պարսիկների հետ հալածելու նրան: Ինչ վերաբերուում է Խորհրդային Սիութեանը, ապա թէեւ ՀՅԴ-ն սովորներից պահանջում է Հայաստանից ուսուական զօրքերի հեռացումը, սակայն գիտակցում է, որ սեփական ուժերով անհնար է իրականացնել այն, այլ միայն համընդհանուր յեղափոխութեամբ: Մինչեւ դրա իրականացումը իրենք Խորհրդային Սիութեան դէմ ո՛չ Պարսկարստանի, ո՛չ էլ մէկ այլ երկրի տարածքում ոչ մի շարժում չեն սկսելու, ուստի Դաշնակցութիւնը իրանի արտաքին քաղաքականութեանը խոչընդոտ է: Նոյնը նաեւ՝ ներքին քաղաքականութեանը մէջ, քանի որ լինելով հականութեան կառավարութիւն, ՀՅԴ-ն խոչընդոտում է իրանում բոլշեվիզմի տարածմանը: ՀՅԴ-ն կանգնած է իրանի տարածքային ամբողջականութեան դիրքերի վրայ երկու պատճառով:

ա) որպէսզի Թուրքիան չկարողանայ տարածուել դէպի-



Հոյրունի զինանշանը

արեւելք,

բ) որպէսզի քրտերը չխարողանան Քիւրտիստան ստեղծել պարսկական հողերով այնպէս, ինչպէս որ Արարատով, Վանով եւ այլ տարածքներով, որոնց հայաթափման մէջ նրանք ունեն գործոն գերակատարութիւն: Այդ իսկ պատճառով ՀՅԴ-ին ձեռնտու չէ ամբողջ քրտական զանգուածի «արթնացումը» եւ կուսակցութեան համար գոյութիւն չունի ո՛չ Պարսկաստանի եւ ո՛չ էլ Իրաքի քրտական հարց: Այս հարցում եւս ՀՅԴ-ի եւ Իրանի շահերը համընկնում են: Ռուբէնը պարզաբանում էր, որ Հ.Յ.Դաշնակցութեանը քրտերը հետաքրքրում են միայն Թուրքիայում, որովհետեւ նրանք պատնէշ են փամթուրանիզմի առջեւ, Թուրացնում են Թուրքիային, եւ նրանց յաջողութեան դէպքում հայերը իրաւունք կը ստանան բարձրացնելու Արեւմտեան Հայաստանի ինդիրը, ու վերջին հաշուով քրտերից աւելի հեշտ է ստանալ հայկան հողերը, քան Թուրքիայից (28):

Միմեանց տեսակէտները ճշգելուց յետոյ Թէյմուրթաշն ու Ռուբէնը կազմեցին համատեղ գործողութիւնների ծրագիր, որը կը սկսէր աշխատել միայն շահի կողմից հաստատուելուց յետոյ: Ծրագիրը կազմուած էր 6 կէտից կամ յօդուածներից:

Հստ առաջին կէտի՝ դաշնակցականներն Իրանում մնալով հակակոմունիստական դիրքերում, չպէտք է օգտագործէին Իրանի տարածքը Անդրկովկասում շարժումներ սկսելու համար:

Երկրորդ յօդուածով Իրանի քաղաքացիութիւնն չունեցող հայերը կարող են անցնել Թուրքիայի արեւելեան նահանգներ՝ քրտերի մէջ աշխատելու համար՝ պայմանով, որ նրանց աշխատանքը ուղղուի միայն թուրքերի դէմ: Նրանց հետ կապի եւ մատակարարման աշխատանքը կը թոյլատուի, բայց խիստ գաղտնի ձեւով:

Երրորդ յօդուածով իրանական իշխանութիւնները պաշտօնապէս իբր՝ պէտք է հետապնդէին եւ ձերբակալէին հայերին, բայց տեղերում հրամանատարական կազմը պէտք է աջակցէր նրանց:

Հստ չորրորդ կէտի՝ պարսկական կառավարութիւնը չէր տրամադրելու պարենամթերք, սակայն դրա փոխարէն սահմանի քրտերին թոյլատուելու էր անարդել անցնել Իրան եւ

պարենամթերք ձեռք բերել:

Հինգերորդ կէտով սահմանամերձ շրջանների զինուուրական հրամանատարների աջակցութեամբ Արարատ կ'ուղարկուէին հայ զինուուրներ: Եւ վերջապէս՝ վեցերորդ կէտով հետապայ գործողութիւնների համար պէտք է կազմուէր «...մի խառն մարմին՝ հայ-քիւրտ-պարսիկ գործերին ընթացք տալու համար» (29):

Այս ծրագրի վերաբերեալ թէեւ չկայ շահի կողմից հաստատուած պաշտօնական համաձայնութիւն (ինչը բնական է), սակայն ամենայն հաւանականութեամբ այն եղել է, քանի որ կարծ ժամանակ անց Իրան-ՀՅԴ համաձայնագիրը սկսեց գործել:

Իրանում Ռուբէնը ծանօթանում է նաեւ տեղի դաշնակցականների տեսակէտներին, որոնք լուրջ վերապահումներ ունեն ՀՅԴ-ի՝ քրտական շարժման հետ համադրծած կցութեամբ: Ռուբէնը հասկանում էր, որ ամէն ինչ այդպէս հարթ չի իրականանալու, ինչպէս իր բանաձեւում հրահանգաւորել էր ՀՅԴ Ընդհանուր ժողովը: Նրա հետ համակարծիք էր նաեւ Իրանի դաշնակցականների մեծ մասը, որոնք շահագրգուած էին հայերի հետ իրանական կառավարութեան բարեկամութեան պահպանման մէջ եւ ծանօթ լինելով վերջինիս հակաքրտական քաղաքականութեանը, հուետեսութեամբ էին նայում բանաձեւի այն մասին, որը վերաբերում էր հայ-պարսկա-քրտական մերձեցմանն ընդդէմ թուրքերի: Նրանք կողմ էին միայն հայ-իրանական մերձեցմանը՝ առանց յոյսերի, որ այդ բարեկամութիւնը կարող է օգտագործուել ընդդէմ փանթուրքիզմի եւ յօդուած քրտական շարժման: Ուստի մատնանշելով 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած բանաձեւի թոյլ կողմերը՝ նրանք Ռուբէնին տալիս էին հետեւեալ տրամարանական հարցերը.

«1) Եթէ Հոյրունը, հակառակ ՀՅԴ որոշմանը, չուզենայ սահմանափակել իր գործունէութիւնը Թուրքիայի սահմաններում եւ միջոցների մեծ մասը չծախսի Թուրքիայում, ի՞նչ պէտք է անել,

2) Եթէ քրտական շարժումներ սկսուեն Պարսկաստանում, սպա հայերը կը յայտնուե՞ն երկընտրանքի առջեւ՝ քրտերի դէմ, պարտիկների հե՞տ,

3) Եթէ հակառակ այդ տեսութեան, պարսկական կառավարութիւնը թշնամաբար վերաբերուի քրտական շարժմանը եւ այդ հոդի վրայ մերձենայ Թուրքիայի հետ, սպա յայտնուելով երկընտրանքի առաջ՝ դաշտանեցնել ամէն աշխատանք, կամ դասուել Պարսկաստանի թշնամիների դասին, ինչպիսի՞ն կը լինի ՀՅԴ-ի ընտրութիւնը» (30):

Սակայն Իրանից գուրս գտնուող դաշնակցականների մեծամասնութիւնը եւ Իրանի դաշնակցականների փոքրամասնութիւնը, այնուամենայնիւ, գտնում էին, որ առանց կորցնելու իրանական կառավարութեան բարեկամութիւնը, հնարաւոր է շարունակել եւ հակաթրքական գործունէութիւնը, եւ հայ-քրտական գործակցութիւնը Թուրքիայի մէջ՝ Պարսկաստանի վրայով:

Այսպիսով, ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած որոշումը մնաց անփոփոխ: Ռուբէնի վկայութեամբ՝ ձերբակալուած Արարէչս Մուրագեանի փոխարէն շուտով Արարատ ուղարկեց Վահանին (31) մի քանի մարտիկների հետ միասին: Իսկ իրանական կողմից Թէյմուրթաշի յանձնարարականները կատարում էր այդ շրջանի զինուուրական հրամանատար ձափար Դովլէն, որը հանդիսանում էր իրանական կառավարութեան հետ ՀՅԴ-ի ոչ պաշտօնական կավը եւ իրանական կողմի ներկայացուցիչը: Նրա սպաները Վահանին իր խմբով անց կացրին իրանա-թրքական սահմանը: Վերականգնուեց մօտ մէկ տարի կտրուած կավը Արարատի ապստամբների հետ,

որոնք համալրուեցին ոչ միայն նոր, թարմ ուժերով, այլեւ առաջին անհրաժեշտութեան ապրանքներով։ ՀՅԴ-ն Վահանի առջեւ դրել էր հետեւեալ առաջադրանքները։

1) Նա պէտք է փոխարինէր Արտաշէսին եւ աշխատեր նշանակուել Արարատի հիւսիսում գործող ապստամբական ուժերի հրամանատար,

2) Նրա գլխաւոր խնդիրը պէտք է լինէր Ա. Մուրագեանի ձերբակալութիւնից յետոյ թրքական իշխանութիւնների գործունէութեան հետեւանքով իրար հետ թշնամացած քրտական ցեղերին վերամիաւորելը, քանի որ Իշան Նուրիին ոչ մի կերպ չէր յաջողւում իրականացնել այդ առաջադրանքը,

3) ոչ մի կերպ չթողնել, որ թուրքերը պարսկական քրտերի շրջանում յուրզումներ առաջացնէին ընդդէմ իրանական իշխանութիւնների, այլ ընդհակառակը՝ նրանց ամուր կապել Արարատի հետ եւ ապահովել ապստամբների թիկունքը,

4) քանի որ Իրանը թոյլ չի տալիս մեծ թիւով հայ մարտիկներ տեղափոխել իր տարածքից դէպի Արարատ, Վահանը պէտք է նրանց տեղափոխի Խորհրդային Հայաստանից՝ տեղի ծպտուած դաշնակցականներից, որոնք կը ցանկանային նորից լինել Երկրում,

5) Նշուած ծրագիրն իրագործելու նպատակով նա պէտք է համոզէր Արարատի ապստամբութեան հրամանատարութեանը, որպէսզի վերջինս չսահմանափակուէր միայն Արարատից հարաւ ընկած տարածքները թրքական գօրքերից մաքրելով, այլ նմանատիպ գործողութիւններ վարէր նաեւ Արարատի հիւսիսային լանջերից մինչեւ խորհրդա-թրքական պետական սահմանն ընկած տարածքներում, որպէսզի հայ կամաւորները կարողանան անարդել հասնել Արարատ,

6) լիազորել կա՛մ Արարատի քրտերից մէկին, կա՛մ Ռուբէնին (Տէր-Մինասեանին) արտասահմանում խօսել Արարատի կառավարութեան կողմից (32):

Բացի այդ, Ռուբէնը եւ Թէյմուրթաշը մշակեցին համատեղ ուազմական գործողութիւնների ծրագիր, ըստ որի՝ քանի որ Արարատը միայնակ չի կարողանայ երկար դիմանալ անընդհատ համալրումներ ստացող թրքական բանակին, ապա անհրաժեշտ է որպէսզի ապստամբական ուժերը ընդարձակեն ապստամբութեան տարածքը, ինչն իրականացնելու համար Վահանը պէտք է ստանար Արարատի հիւսիսային ճակատի հրամանատարի պաշտօնը եւ իր տարամադրութեան տակ՝ Գիալբաբանի, Պոյշրբի, Գիլոյի, Խըտըր աղա Շամկանի, Ալօ Մըհոյի ցեղերը՝ ընդհանուր 2300 վրանով, որոնց անհրաժեշտ էր թշնամացնել Արալրխների մէջ բնակուող թաթարների (ազերի) հետ եւ Դաշըրուունից մինչեւ Շահթախթ ընկած տարածքում բնակուող թուրք-թաթարական ազգաբնակչութեանը հեռացնել կամ բնաջնջել՝ Արարատի ապստամբների համար ձեռքերի ազգատութիւն ապահովելով մինչեւ Արաքս։ Այդ ամէնից յետոյ նրա ուժերը պէտք է գրաւէին Մարգարա-իգիր գիծը, ամրանային Օրկովի, Զինգիլ-Սինակ լեռնանցքներում եւ Սուրմալուն ու Կողըը մաքրէին թաթարներից, որտեղից Վահանը պէտք է կապուէր Արագածի փէշերին ծուարած սասունցի եւ մշեցի փախստականների հետ եւ նրանցից կամաւորական ջոկատներ հաւաքելով՝ ուղարկէր Արարատ։

Արարատից հարաւ ընկած ուղղութեան համար որոշուեց հետեւեալը. այնտեղ բնակուող վեց ցեղերից կազմաւորել պաշտպանական ճակատ ճահճներից մինչեւ Արծափ, իսկ Վահանն այդ ժամանակ պէտք է կարէր Իգդիր-Բայազէտ ճանապարհը։ Նոյն այդ ժամանակ Արարատից արեւելք բնակուող իրանի ուժ քրտական ցեղերը թէեւ ընդհանուր ճակատ



Արարատի քրտական ապստամբութեան մասնակից քրտական զինեալ ջոկատ

չունէին, բայց միանալով պէտք է պաշտպանէին Իհսանի եւ Վահանի թիկունքը՝ չթողնելով այնտեղ թրքական գօրքերի յայտնուելը, իսկ միւս ուժերը պէտք է կարէին Բայազէտի ճանապարհը Վանից եւ Արճեշից (33):

Մարտական գործողութիւնների այս ծրագիրը փոքր փոփոխութիւններով ընդունուեց Արարատի կառավարութեան կողմից, որը կայացրեց հետեւեալ գործնական որոշումները։

1) գօրքերի ընդհանուր հրամանատարը շարունակում է մնալ Իհսան Նուրին,

2) հիւսիսային ուազմաճակատի հրամանատար է նշանակում Վահանը,

3) բուն Արարատի պաշտպանութիւնը վստահւում է Բրոյին (Խպրահիմ Հըսպէին),

4) Արարատից հարաւ ծաւալուող յարձակողական գործողութիւնները ղեկավարում են Քոռ Հուսէյն փաշայի որդին եւ Կարոն (34):

Այս ամբողջ գործողութիւնների մէջ չատ մեծ էր մէկ այլ դաշնակցական, մասնագիտութեամբ բժիշկ Մանուկի գերակատարութիւնը, որը, լինելով ծափար Դովլէին շատ մտերիմ անձնաւորութիւն, գարձել էր յուսալի կամուրջ Իրանի տեղական իշխանութիւնների եւ քրտերի միջեւ։ Ծափար Դովլէին Մանուկին նշանակում է սահմանային շրջանի զինուրական բժիշկ։ Նրան յաջողում է իր շուրջը հաւաքել պարսիկ սպաների, որոնք գաղտնի օգնում էին քրտերին։ Սակայն շուտով, երբ այդ փաստը յայտնի դարձաւ թուրքերին, իրանական իշխանութիւնները ստիպուած էին հեռացնել նրանց իրենց պաշտօններից։ Այնուամենայնիւ, գաղտնի օգնութիւնը քրտերին թէ՛ հայերի եւ թէ՛ պարսիկների կողմից շարունակում էր, ինչը ոգեւորութիւն առաջ բերեց Արարատի ապստամբների շրջանում։

Եթէ Արարատի եւ նրա շուրջը եղած քրտական ցեղերին պէտք է աշխատէր միաւորել Վահանը, ապա պարսկական քրտերին Մանուկը (35)։ Այդպիսով նա պէտք է զերծ պահէր նրանց թրքական ազգեցութիւնից եւ կապելով Արարատի ապստամբների հետ՝ ապահովէր վերջիններիս թիկունքը։ Նրան այդ հարցում օգնում էր Կարոն, որը ժամանակ անցնում էր իրան եւ Մանուկի հետ քննարկում հետագայ անելիքները։ Մանուկը համաձայնութեան եկաւ տեղի ցեղերի առաջնորդների հետ այն մասին, որ Արարատի

ապստամբների կողմից Աղադաղում եւ Բայազէտում մարտեր մղելու ժամանակ նրանք պէտք է օգնական ուժեր ուղարկեն, ինչպէս նաեւ հաց փոխադրեն եւ վաճառեն այն փոխարժէքով, որն ինքը պէտք է որոշի (36):

Այս իրադարձութիւնները տեղի ունեցան 1930 թ. մայիս-յունիս ամիսներին, եւ այդ կարճ ժամանակահատուածում Մանուկին յաջողուեց կարգաւորել այնպիսի խնդիրներ, որոնք անկարող էին լուծել իրանի եւ Արարատի կառավարութիւնները շատ երկար ժամանակ: Նրա շնորհիւ իրանական կողմը, որն այդ շրջանում ունէր զօրքերի շատ թոյլ խմբաւորում, որպէս դաշնակից ձեռք բերեց մի քանի ուազմատենչ ցեղեր՝ 3100 վրանով եւ ամուր փակեց թուրք-իրանական սահմանը թրքական զօրքերի հաւանական ներխուժութումից: Այս փաստը կարեւոր էր նաեւ մէկ այլ պատճառով. Արարատի քրտերն իրենց թիկունքում տեսնում էին իրենց ցեղակիցների ջոկատները, այլ ոչ թէ պարսիկների ստորաբաժանումները, որոնց նրանք նոյնպէս չէին հաւատում: Այս գործութիւնների շնորհիւ Արարատն արեւելքից անվտանգ էր 1930 թ. մայիսից մինչեւ յունիսի 15-ը: Ուստի մինչեւ 1930 թուականի յուլիս ամիսը Արարատի ապստամբներին յաջողուեց մի քանի անգամ պարտութեան մատնել թրքական զօրքերին:

Թրքական իշխանութիւնների համար պարզ էր, որ առանց թուրք-իրանական սահմանն ամուր փակելու շատ գժուար եւ նոյնիսկ սահնար է լինելու յաղթել քրտերին: Դա կարելի էր երկու ճանապարհով. կամ իրանական զօրքերն իրենք պէտք է ամուր փակէին սահմանը, կամ էլ թողնէին, որպէսպի գա իրականացնեն թրքական զօրքերը: Սակայն շահական կառավարութիւնը չունէր անհրաժեշտ քանակութեամբ ուժեր իրավիճակը երկար ժամանակ վերահսկելու համար, եւ երկրորդ՝ այդպիսի քայլ կատարելը կը նշանակէր բախում իր երկրի քրտերի հետ, որից անպայման կ'օգտուէր թուրքիան՝ ցանկանալով շեղել քրտերի ուշագրութիւնը Արարատից եւ նրանց ուղղել իրանի դէմ: Բացի այդ՝ շահը դէմ չէր օգտուել թուրքերի ծանր կացութիւնից: Այդ իսկ պատճառով զարմանալի չէր, որ իրանական կողմը, ամէն պատրուակ օգտագործելով, չէր փակում սահմանը: Իսկ թրքական զօրքերի իրանական տարածք անցնելու եւ այդտեղ քրտերի դէմ պատերազմական գործողութիւններ սկսելու մասին խօսք անգամ լինել չէր կարող:

Այս ամէնը սրեց թուրք-իրանական յարաբերութիւնները, սակայն առանց դաշնակցի թուրքիան չէր համարձակւում իրանի հետ գնալ բացայացտ առնակատման՝ փախենալով Մեծ Բրիտանիայի միջամտութիւնից: Գործն աւարտուում էր բողոքի նանակներով, որոնք անպատասխան չէին մնում իրանական կողմից:

Սակայն շուտով քրտերի եւ դաշնակցականների յաջողութիւնները Արարատում խոր անհանգստութիւն առաջ բերին խորհրդային ղեկավարութեան մօտ եւ ստիպեցին հանդէս գալ թուրքերի կողմում, ինչը միանդամից փոխեց տարածաշրջանային ուժերի հաւասարակշռութիւնը:

Մինչ այդ՝ 1930 թ. յունիսի 19-ին Մանուկին իր մօտ է հրաւիրում հայտարան ցեղի առաջնորդներից Եռուսուփ-Արդալին եւ տալով նրան 100 տոլար՝ յանձնարարում է թուրքերի դէմ ոտքի հանել ողջ հայտարանը, ինչպէս նաեւ Սարայի եւ Արարայի շրջակայիշ ցեղերին: Համոզիչ երեւալու համար Մանուկը Եռուսուփ-Արդալին յայտնում է, որ իր դրամը նաեւ ծափար Դովլէի դրամն է, եւ իր շուրջերով խօսում են ոչ միայն հայերը, այլև պարսիկները: Սակայն այս քայլը տուեց բոլորովին հակառակ արդիւնքը, որը խիստ բացասական ազդեցութիւն ունեցաւ քրտական ապստամբութեան

վրայ: Եռուսուփ-Արդալը Մանուկի յայտնած լուրը հասկանում է իւրովի: Նա, ցանկանալով իր ազգեցութիւնը տարածել այլ ցեղերի վրայ, նրանց առաջնորդներին է ուղարկում նամակներ, որտեղ գրում է, թէ ինքը շարժում է ծափար Դովլէի հրահանգով, որը նոյնպէս անկախ Քիւրտիստանի կողմնակից է, եւ ով չենթարկուի նրա՝ դէպի թուրքիա արշաւելու հրամանին, պէտք է ոչնչացուի: Նամակատարներից մէկն ընկում է թուրքերի ձեռքը, եւ որպէսպի հարթեն այս միջադէպը, պարսիկները ձերքակալում են Եռուսուփ-Արդալին եւ բանառում թունաւորում (37):

Սակայն ակնյայտ էր, որ թուրքերն իրենց ձեռքից բաց չէին թողնելու այս անակնկալ յաջողութիւնը եւ չէին բաւարարուելու Եռուսուփ-Արդալի մահուամբ: Նրանք մեղադրեցին իրանական գորքերի ղեկավարութեանը թուրքիայի դէմ թշնամական գործողութիւններ կատարելու մէջ եւ պահանջեցին բարեկան գորքերի ձեռքական զօրքերին՝ մտնելու իրան եւ դուրս գալու Արարատի ապստամբների թիկունքը: Իրանական կողմը ստիպուած էր զիջել, ուստի փոխեց այդ շրջանի հրամանատարական կազմը, այդ թուում՝ ծափար Դովլէին եւ Մանուկին, սակայն թրքական զօրքերի՝ իրանական հողեր մուտքին շարունակում էր ընդդիմանալ:

Եռուսուփ-Արդալի անխնեմ քայլը սկզբնական ժամանակաշրջանում տուեց նաեւ իր գրական արդիւնքները. շատ ցեղապետեր, հաւատալով նրան, յարձակուեցին թուրքերի վրայ: Օսման պէյլը մօտ 120 հոգով անցաւ սահմանը եւ մինչեւ Սարայ ընկած տարածքը մաքրեց թուրքերից: Խսկ մազրիցի Շարաֆ պէյլի որդի Օսման-Հասոն գրաւեց Ս. Բարդողիմէսուի վաճքը՝ կոտորելով տեղի պահակազօրը:

Խսկ աճա Կարոն՝ Խպրահիմի հետ միասին, թուրքերին քայլ Արարայից մինչեւ Բերկրի՝ Կտրելով Վան-Բերկրի ճանապարհը (38): 1930 թ. յունիս ամսին քրտական ուժերը յաջող յարձակողական գործողութիւններ իրականացրին Արարատի հարաւային եւ հիւսիսային ուազմաճակատներում: Զարգացնելով իրենց յաջողութիւնները հարաւային ուազմաճակատում՝ Կարոն, Քոռ Հուսէյն փաշալի որդիները եւ այլ ցեղապետեր Արարայի, Բերկրի, Զիլանի եւ Մանազկերտի ուժերի համատեղ պարտութեան մատնեցին թուրքերին եւ գրաւեցին Արձչն ու Զիլանը, որից ոգեւորուած՝ Վանի քրտերն էլ գրաւեցին Վանը, որը, սակայն, չկարողացան երկար պահէլ: Հաքիարիի ապստամբներն էլ գրաւեցին Զուլամբերի կոտորելով տեղի թրքական կայազօրը (39):

Փաստօրէն 1930 թ. յուլիս ամսին թրքական զօրքերը նահանջել էին Արարատից մինչեւ Հաքիարի, եւ իշխանութիւնները գտնուում էր քրտերի ձեռքերն: Իրանի քրտերի հետ միասին այդ ժամանակ իրենց ազգակիցներին օգնութեան են գալիս նաեւ իրաքի եւ Սուրբիայի քրտերը: Կերը յիշատակուած Օսման աղան ուրիշ ցեղապետերի հետ միասին համաձայնագիր է կնքում իրաքեան Քիւրտիստանի ամենայայտնի չէյիմերից մէկի՝ Անմէտ Պարզանիի հետ: Այս միացեալ ուժերը գրաւում են Օրամարը, որի ժամանակ, բացի զինուորականներից, զուհուում են նաեւ բազմաթիւ թուրք սստիկաններ եւ քաղաքացիական ծառայութեան երթուական ժամանակը արդիւնքի մէջ կայազօրը:

1930 թ. օգոստոսին մի քանի անգամ Սուրբիայից թուրքիա է ներխուում Օսման աղա զադէ Հաջոն, խսկ Հոյրունի փաստացի ղեկավարներ Բաղրիման եղբայրները Սուրբիայում կազմաւորուած մի հեծեալներով, ինչն էլ կանխորշեց թուրքերի պարտութիւնը:

ջոկատ, որը նոյնպէս պէտք է օգնութեան հասնէր Արարատի ապստամբներին (41):

Հիւսիսային ռազմաճակատում Վահանի ուժերը Դաշըռունի մօտ տեղի ունեցած կատաղի մարտերից յետոյ 1930 թ. յունիսի վերջին գրաւում են Արաքսի ափ-Արալիսներ, Դաշըռուն-Զորա Քիաթուկ գիծը եւ ասպատակում հղդիրի դաշտավայրը մինչեւ Կաղզուան (42): Թրքական զօրամասերը, չկարողանալով դիմադրել քրտական ճնշմանը, անցնում են խորհրդա-թրքական սահմանը եւ ապաստան գտնում Խորհրդային Հայաստանում:

Սուրմալուի ճակատում Վահանը փորձում է միաւորել տեղի քրտական ցեղերին, սակայն դիմադրութեան է հանդիպում զզըլպաշ օղլու ցեղի կողմից, որը պահանջում է նախքան ապստամբութեանն իր միանալը ռազմաճակատ բերել 200-300 հայ մարտիկների Խորհրդային Հայաստանից: Վահանը խոստանում է կատարել այդ պահանջը, սակայն պայմանով, որ մինչ այդ մարտիկների տեղ հասնելը նրանք դուրս մղեն Արարատից մինչեւ խորհրդային սահման ընկած տարածքում եղած թրքական զօրքերը եւ թուրք-թաթարական (աղերիական) բնակչութիւնը դէպի Խորհրդային Հայաստան (43):

Թէեւ քրտերը խոստացան իրականացնել այդ խնդիրը, սակայն չկարողացան, քանզի առաջին ռազմական յաջողութիւններից յետոյ նրանք տարուեցին թալանով, եւ միայն մի փոքրաթիւ ջոկատ հաւատարիմ մնաց Վահանին (որին քրտերն անուանում էին Վելի): Այդ իսկ պատճառով նա կարողացաւ իրագործել Թէյմուրթաշի եւ Ռուբէնի համաձայնեցրած ծրագրի միայն առաջին երկու կէտերը, իսկ երրորդ եւ չորրորդ կէտերը՝ բացել Սինակի լեռնանցքը եւ Սուրմալուով օգնութիւն ստանալ Հայաստանից, մնացին անկատար: Վահանի ուղարկած զինեալ ջոկատները հասնում էին մինչեւ Կողը, սակայն սովոր չլինելով դիրքային, խրամատային մարտածեին, իրենց թալանած աւարով կերպառնում էին Արարատ:

Նոյնը տեղի ունեցաւ եւ Դաշըռուունի ճակատամարտից յետոյ, երբ քրտերը գրաւեցին հդիրը, եւ թրքական զօրքերը ստիպուած էին փախչել Խորհրդային Հայաստան. այնտեղ ամրանալու փոխարէն քրտերը թալանեցին քաղաքը եւ վերադարձան Արարատ: Անյաշողութեամբ են աւարտում նաեւ Վահանի՝ Հայաստանից կամաւորներ բերելու փորձերը: Նա մի քանի քրտական խմբեր է ուղարկում Խորհրդային Հայաստանի տարբեր մասեր՝ կամաւորներ հաւաքագրելու եւ Արարատ անցկացնելու համար: Սակայն խմբերից մէկը, խոյս տալով ուռւս սահմանապահներից, հասնում է Դավալու եւ չկողմնորոշուելով, թէ ո՞վ է կամաւորական եւ ո՞վ բոլցեւիկ, մարտի է բռնուում տեղացիների հետ եւ փամփուշտները սպառուելուն պէս միւս խմբի հետ վերադառնում Արարատ լեռան վրայ (44): Իսկ ահա միւս խումբը անցնում է սահմանը Սարդարապատի մօտ, որպէսզի հասնի Արագած՝ սասունցիներից ջոկատներ կազմաւորելու համար, սակայն նկատում է Խորհրդային զօրքերի կողմից եւ առանց հասնելու թալին՝ ստիպուած է լինում Անիի մօտ անցնել Ախուրեան գեալը՝ իր հետ տանելով թալանը եւ ճանապարհին հանդիպած հայ գիւղացիներին (45):

Այս իրագարձութիւններն էին, որ գրեցին Խորհրդային Միութեան գեկավարութեանը միանալ քեմալականներին եւ ճնշում գործադրել իրանական իշխանութիւնների վրայ՝ օր առաջ ապստամբութիւնը պարտութեան մատնելու նպատակով, քանի որ բոլցեւիկները քրտերի արշաւաները համարում էին դաշնակցականների հետախուզական մարտեր, որոնց հետեւելու էին աւելի լուրջ գործողութիւնները: Նրանց համար

դրութիւնն աւելի էր բարդանում այն պատճառով, որ կողեկտիվացման քաղաքականութեան հետեւանքով Անդրկովկասում, այդ թիվում՝ Խորհրդային Հայաստանում առաջացել էր հակակոմունիստական մեծ շարժում, որը շատ վայրերում վեր էր ածուել բացայայտ ապստամբութիւնների, երբ ամբողջ գիւղեր մարտի էին բռնուում ՆԳԺԿ-ի եւ կոմունիստաներից ու կոմերիտականներից հաւաքագրուած ստորաբաժանումների հետ:

Մուկուտան համոզուած էր, որ դաշնակցականներն օգնութեան են շտապում ապստամբներին, եւ եթէ ձեռք չառնուեն կտրուկ միջոցներ, ապա իրավիճակն ամէն վայրկեան կարող է հսկողութիւնից դուրս գալ, առաւել եւս, որ Հայաստանում սկսեցին յամառ լուրեր շրջել, թէ իբր Դրուն գալիս է՝ Հայերին եւ քրտերին միաւորելու համար: Արեւմտահայ փախստականները, որոնք աւելի շատ էին հաւատացել այդ լուրերին, նոյնիսկ մարդկիկ ուղարկեցին դէպի Արարատ, սակայն արդէն ուշ էր. ուռւս բոլցեւիկները եւ նրանց օգնութեամբ՝ քեմալականները երկու կողմից ամուր փակել էին սահմանը:

Խորհրդային իշխանութիւնների թույլտուութեամբ թրքական զօրքերը Կարսից երկաթուղով բերուեցին Լենինական, ապա՝ Սարդարապատ ու Արտաշատ եւ այդ վայրերից անցնելով սահմանը՝ փակեցին այն: Սակայն չբաւարարուելով այդքանով՝ խորհրդային հրամանատարութիւնը որոշում է կայացնում ոռւսական զօրքեր ուղարկել՝ Արարատի ապստամբների դէմ կոռւելու համար: Ընդ որում՝ հայկական կարմիր բանակի զօրամասերը ուղարկուում են իջեւան եւ Ղաղախ, քանի որ մտավախութիւն կար, որ միայն Դրոյի մասնակցութիւնը Արարատի ապստամբութեանը բաւարար էր, որպէսզի նրանք անցնէին դաշնակցականների կողմը (46): Ըստ բոլցեւիկների՝ հայ-քրտական դաշինքը ծրագրուած էր Մեծ Բրիտանիայի կողմից եւ նպատակ ուներ խորհրդային Կովկասի սահմանին մօտ ստեղծել յենարան՝ այնտեղ ապստամբութիւններ առաջացնելու եւ գրաւելու նպատակով:

1930 թ. յուլիս-օգոստոս ամիսներին մարտերն Արարատում ընթանում էին փոփոխակի յաջողութեամբ: Թրքական զօրքերին ոչ մի կերպ չէր յաջողուում առաւելութեան հասնել քրտերի նկատմամբ: Փոքր Մասիսի իրանական մասից ձՅԴ-ն եւ քրտական ցեղերը շարունակում էին օգնել Արարատի ապստամբներին: 1930 թ. օգոստոսի 7-11-ին Բայազէտի ճահիճներում ապստամբներին յաջողութեամբ է չափազանց ծանր պարտութեան մատնել թրքական պատժիչ զօրքերին՝ Սալիհ փաշայի հրամանատարութեամբ: Զարգացնելով յաջողութիւնը՝ նրանք գրաւում են մեծ տարածքներ եւ դուրս գալիս խորհրդա-թրքական սահման առաջացնելու հաջողականացներին ոչ մի կերպ չէր յաջողուում համոզել Խեղագա շահ շահին՝ պարտութիւնների առաջապատման թրքական զօրքերին՝ Սալիհ փաշայի հրամանատարութեամբ: Զարգացնելով յաջողութիւնը՝ նրանք գրաւում են մեծ տարածքներ եւ դուրս գալիս խորհրդականներին ոչ մի կերպ չէր յաջողուում համոզել Խեղագա շահ շահին՝ զիջել թուրքիային Փոքր Մասիսի արեւելեան հատուածը:

5. ԽՍՀՄ-ի ոազմաքաղաքական շանթամբը եւ Իրանի դիրքորշման փոփոխութիւնը

Խորհրդային դեկավարութիւնը շահին ստիպելու նպատակով 1930 թ. օգոստոսի վերջին զօրքեր է մտցնում իրան՝ Արդարաբիլի եւ Մաշհադի ուղղութեաններով (47): Խեղագա շահ հարկադրուած էր տեղի տալ: Թրքական զօրքերը օգոստոսի վերջին անցնում են թուրք-իրանական սահմանը եւ շրջապատում Արարատի ապստամբներին: Իրենց բաժինն են ստեղծուած էր սեպական աւելի լուրջ գործողութիւնները. Իրանում գտնուուղ սպիտական

գվարդիականները յանձնուում են նրանց եւ անմիջապէս գնդակահարուում: Սակայն շահը չի յանձնուում դաշնակցականներին, որոնց ընդամէնը՝ ժամանակաւորապէս աքսորում է երկրի հարաւային շրջաններ:

Արարատի քրտերը իհասն նուրիի եւ Բրոյի ղեկավարութեամբ դեռեւս չգիտէին ոուս-պարսկա-թրքական գաղտնի գործարքի մասին եւ ոգեւորուած օգոստոսի առաջին կէսի խոչըր յաջողութիւններով՝ շարունակում էին փոքր խմբեր ուղարկել դէպի հիւսիս ու արեւմուտք՝ մինչեւ Կարս եւ Երզրում (48): Թաւրիզի դաշնակցական մարմնին յաջողուում է իր անդամներից Դաւիթին (49) եւ Միոյին (50) ուղարկել Արարատ՝ յայտնելու ապստամբներին, որ արդէն պէտք է զգուշանալ պարսիկներից եւ իրանից չպէտք է սպասել որեւէ օգնութեան, այլ միայն Խորհրդային Հայաստանից, որտեղից դաշնակցականները պէտք է խումբ կազմաւորէին եւ ուղարկին Արարատ:

Զգալով վերահաս վտանգը՝ ՀՅ-ն աշխատում էր ամէն կերպ օգնութիւն հասցնել Արարատ, սակայն գնուած ուղամբթերքն ու սնունդն ուղարկել չյաջողուեց, քանի որ իրանական քրտերը հրաժարում էին անցնել սահմանը: Մնում էր միայն օգնութիւնը Հայաստանից: Վահանի ուղարկած մարդիկ 1930 թ. սեպտեմբերի սկզբին վերադառնում են այնտեղից՝ իրենց հետ բերելով մօտ 170 մարդ: Այս փախստականները Արարատի ապստամբներին թշնամի քրտական ցեղերի կողմից չժամանուեցին եւ չսպանուեցին, այլ նրանց նոյնիսկ ճանապարհ տուեցին հասնելու իհասն նուրիի եւ Վահանի մօտ (51): Սակայն այդ խումբը ապստամբութեան մօտ հիասթափութիւն առաջացրեց, քանի որ նախ՝ նրա միայն մի փոքր հատուածն էր զինուած, եւ մեծ մասը եկել էր ոչ թէ կոռուելու թուրքերի դէմ, այլ բոլշևիկներից գլուխներն ազատելու նպատակով, եւ երկրորդ՝ նրանք որպէս գաղտնիք Վահանին յայտնում են, որ խմբի շատ անդամներ ուղարկուել են ՕԳՊՈՒ-ի կողմից եւ նպատակ ունեն ներսից քայքայել ապստամբութիւնը: Այդ իսկ պատճառով Վահանը զինաթափում է խումբը եւ ուղարկում իրան, որտեղ նրանք ձերբական իրան գորքերի կողմից եւ աքսորուում հարաւային սահմաններ:

1930 թ. սեպտեմբերի սկզբներին սկսում է թրքական զօրքերի ընդհանուր յարձակումը, որը տեսում է մօտ մէկ ամիս: Ապստամբների գլխաւոր ուժերը պարտում են, որոշ ցեղեր անցնում են թուրքերի կողմը: Տեսնելով օրհասական վտանգը՝ Վահանը գնում է Խորհրդային Հայաստան՝ անձամբ հաւաքագրելու կամաւորների ջոկատ, սակայն իր գնաւու յաջորդ օրը Խաչան նուրին անցնում է իրան՝ անիմաստ դարձնելով նրա ճամբորդութիւնը: Խակ երը Վահանը, բանից անտեղեակ, վերադառնում է Արարատ՝ մէկ տասնեակ սասունցիներով, ապստամբութիւնն արդէն ճնշուած էր: Զգտնելով Բրոյին՝ նա անցնում է իրան եւ յանձնուում իշխանութիւններին. նրան բանտարկում են, սակայն կարճ ժամանակ անց ազատ են արձակում (52):

Քրտերի կորուստներն ահուելի էին: Մօտաւոր հաշուարկներով, տարբեր աղբիւրների համաձայն, միայն սպանուածների թիւը տատանուում էր 9-15 հազարի սահմաններում, որոնց գերակշիռ մասը խաղաղ բնակչներ էին: Հարիւրաւոր գիւղեր ոչնչացուել էին ամբողջովին: Արձէշում քրիզուել էր մօտ 200 գիւղ, Արարատի շրջակայրում՝ 600, Պատնոցում ոչ մի գիւղ չէր մնացել (53): Ապստամբութեան պարտութիւնը լարուած յարաբերութիւններ առաջ բերեց հայերի եւ քրտերի միջեւ: Քրտերի մի մասը մեղադրում էր ՀՅ-ին՝ իրենց արկածախնդիր գործողութիւնների մէջ ներ-

քաշելու համար, որի պատճառով ունեցան սոսկալի կորուստներ եւ աւերածութիւններ: Հարկաւոր էր հնարաւորինս արագ կանխել յարաբերութիւնների հետագայ լարումը, որը կրկին կարող էր վերանել թշնամութեան՝ այդտեղից բխող ծանր հետեւանքներով:

Առաջին քայլը, որ կատարեց ՀՅ- Դաշնակցութիւնը, քիւրա աքսորուած ընտանիքներին, յատկապէս ղեկավարներին նիւթական օժանդակութիւն ցուցաբերելով էր: Այդ քայլը մեղմեց քրտերի գգուհութիւնը, ինչից օգտուելով՝ ՀՅ-ի գործիչներին յաջողուեց նրանց համոզեցի կամ էլ՝ քրտերը ցանկացան ընդունել այդ վարկածը, որ Արարատի ապստամբների պարտութեան գլխաւոր պատճառը հանդիսանում է ոչ թէ ՀՅ-Դաշնակցութեան գործունէքները, այլ շահի կառավարութեան դաւաճանութիւնը եւ բոլշեվիկների թշնամական վերաբերմունքը:

Դեռեւս 1930 թ. օգոստոսի վերջին, երբ արդէն պարզ էր, որ Արարատի պարտութիւնը գրեթէ անխուսափելի է, ՀՅ-ի որոշում է իրանում անցկացնել խորհրդակցութիւններ՝ Արարատից յետոյ հետագայ անելիքները որոշելու նպատակով: Այդ խորհրդակցութիւնները տեսնեցին ողջ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները, որոնցում հաշուի էին առնւում նաեւ բանտերում եւ աքսորայալյերում գտնուող Ի. Նուրիի, չէյլ Արդալի եւ այլ ազգեցիկ առաջնորդների կարծիքները: Ի վերջոյ, 1931 թ. սկզբին ընդունուեց մի ծրագիր, ըստ որի Արարատի հետ կապը չպէտք է կարուէր, անհրաժեշտ էր օգնել ապստամբների ընտանիքներին, ինչպէս նաեւ աշխատել, որպէս գաքուածները վերադառնան իրենց բնակավայրերը, իսկ երբ Արարատում վերաստեղծուի ապստամբական ամուր կորիք, յատկացնել նրան 3000 տոլար պիւտճէ: Անհրաժեշտ էր նաեւ կազմակերպել Ուրմիայի քրտերին, դէպի Վասպուրական ուղարկել քարոզիչներ եւ հայդուկային խումբեր, նոյն ծրագիրն իրագործել նաեւ Հաքիարիի եւ իրաքի քրտերի շրջանում: Եւ վերջապէս՝ Արարատի շրջանի լիազօր կազմակերպիչ նշանակել Սուրէնին (54), իսկ Հաքիարիի եւ Վասպուրականի շրջաններում՝ Սաֆրազին, իւրաքանչիւրին յատկացնելով 3000 տոլար պիւտճէ (55):

ՀՅ-Դաշնակցութեան ղեկավարները ոչ առանց հիմքի գտնում էին, որ թէ եւ քրտերի կորուստներ մեծ էին, սակայն նրանց գլխաւոր ուժերը ոչ թէ ջախճախուել, այլ ցրուել էին թրքական զօրքերի կողմից, եւ եթէ տարուեն համապատասխան աշխատանքներ, ապա 1931 թ. գարնանը Քիւրտիստանի եւ Արեւմտեան Հայաստանի տարբեր մասերում նորից կառաջանան հումկու ապստամբութիւններ:

Իրագործելու համար իր առջեւ գրուած առաջադրանքները, Սաֆրազը իր մօտ հրաւիրեց Մոկքի առաջնորդներին, որոնք տարագրուել էին իրան, եւ նրանց միջոցով կարողացաւ շատ կարճ ժամանակահատուածում կազմակերպել ու ելոյթների մզել Վասպուրականի քրտերին: Սակայն թրքական իշխանութիւնները ուշադիր հսկում էին քրտերին եւ նրանց առաջին յաջողութիւնից յետոյ շատ արագ կասեցնում են շարժման ծաւալումը: Այնուամենայնիւ Սաֆրազին, որն այդ ժամանակ գտնուած էր թուրք-իրանական սահմանին, յաջորդում է դէպի իրան փախած քրտերից նորից խումբ հաւաքարի կողմից յաջողութիւնից յաջորդուած էր կարուէր կամ ազգային կամաւոր գործունէքների մասը կազմակերպել տեղի քրտական ցեղերին:

բ) գտնել փախստականներից վստահելի տարբեր եւ Վասպուրականի գաւառներում ստեղծել յուսալի յենարան,

գ) այս յենարանի կորիզները կապել իրար հետ, իսկ հետագայում՝ իրանի եւ իրաքի քրտերի հետ եւ

դ) ուղիներ որոնել սննդամթերի հայթայթման համար (56):

Այս խմբին յաջողուում է կատարել իր վրայ դրուած պարտականութիւնները եւ շրջելով Վասպուրականի մի շարք գաւառներով՝ ստեղծում է կորիգներ, նրանց կապում է իրար հետ: Վերաբանապով իրան՝ նրանք ներկայացնում են Վանի եւ նրան հարեւան վիլայէթներում տիրող իրավիճակը, ինչը թոյլ է տալիս Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավարութեանը եղրակացնելու, որ քայլքայման ու կործանման եղրին կանգնած Քիւրտ ազգաբնակչութիւնը ատելութեամբ է լցուած դէպի թուրքերը եւ համակրանքով՝ դէպի հայերը, ուստի անհամեշտ քանակի կազմակերպիչների, գէնքի, դրամի առկայութեան դէպում նրանց կարելի է շատ արագ համախմբել եւ ուղղել թուրքերի դէմ: Նրանք չէին սիսալուում՝ ենթադրելով, որ 1931 թ. գարնանը կը ծագեն նոր ապստամբութիւններ:

Եւ իսկապէս, 1931 թ. գարնանը, չնայած այն հանգամանքին, որ թրքական իշխանութիւնները Արարատը յայտարարել էին փակ գոտի եւ բացի զինուրականներից այնտեղ ոչ ոք իրաւունք չունէր գտնուելու, քրտական ցեղերը նորից ապստամբութիւն բարձրացրին: Ցատկապէս աշխոյժ էին Պատնոցի ցեղերը: Ճիշդ է, այդ ապստամբութիւնը չունէր այն թափը, որ կար 1930-ին, սակայն ստիպեց թրքական հրամանատարութեանը զգալի քանակի ուժեր ներզրաւել այն ճնշելու համար:

Ինչ վերաբերում է Հոյրունին, ապա Արարատի ապստամբութիւնից յետոյ նրա հեղինակութիւնն ընկաւ, եւ այդ կուսակցութիւնը բռնեց քայլքայման ուղին: Բազմաթիւ աղդեցիկ առաջնորդներ գուրս եկան նրա կազմից: Իսկ նախկին անդամներից ոմանք մեղադրում էին Հոյրունի ղեկավարներին հայերի՝ ՀՅԴ-ի հետ համագործակցելու մէջ, ինչը հանգեցրեց ծանր կորուստների: Հոյրունը արագ հեռացաւ քաղաքական ասպարէցից եւ իր գործունէութիւնը սահմանափակեց կրթական աշխատանքներով:

6. ՀՅԴ-ն եւ քրտական հարցի միջազգայնացումը

Արարատի ապստամբութեան պարտութիւնից յետոյ Հ.Յ. Դաշնակցութիւնը փորձեց քրտական հարցը ներառել Ազգերի Լիկայի օրակարգում՝ որպէս հարթակ օգտագործելով Սոցիալիստական Ինտերնացիոնալը – Սոցինտերն (Ընկերվար Միջազգայնական): Սոցինտերնում քրտական հարցը Հ.Յ. Դաշնակցութեան կողմից բարձրացնում էր Արշակ Զամալեան (Խսահակեան):

Հ.Յ. Դաշնակցութիւնը այս հարթակի վրայ քրտական հարցն առաջարել էր դեռեւս 1925 թ. Մարսէլլում կայացած միջազգային համագումարի ժամանակ: Այդ քաղաքականութիւնը նոր թափ ստացաւ Հոյրունի ստեղծումից յետոյ: 1928 թ. յուլիսին «Ազգերի Լիկայի աշակցութիւն ասոցիացիայի» համագումարում ՀՅԴ-ի Զանքերով ընդունուեց կտրուկ բանաձեւ՝ կապուած Թուրքիայի կողմից տարուող աղդային քաղաքականութեան հետ, ինչպէս նաև Ազգերի Լիկային ուղղուած միջամտելու կոչ: 1931 թ. օգոստոսին Ցիւրիխում կայացած Սոցինտերնի գործադիր կոմիտէի նստաշրջանի ժամանակ Հ.Յ. Դաշնակցութեանը յաջողութեանը նշում է քրտական հարցը ներառել նրանու կուսակցութիւններին անելու համար ամէն ինչ, որ պէսպի ստիպեն իրենց կարող էր մեծ պատերազմի առիթ դառնալ, իսկ Սոցինտերնը միշտ դէմ է եղել արիւնահեղութեանը եւ գտնում է, որ իրենց նպատակներին հասնելու համար քրտերը պէտք չէ գիմեն պայքարի, այլ՝ խաղաղ եղանակների: Եւ ամենակարեւորը՝ անյայտ էր Թուրքիայի վրայ ճնշում բանեցնելու ուղին, քանի որ այդ ժամանակ Թուրքիան դեռեւս Ազգերի Լիկայի անդամ էր, եւ նրա դէմ նման հարց բարձրացնելու համար անհրաժեշտ էր որեւէ երկիր նախաձեռնութիւնը, սակայն յանուն քրտերի ոչ մի պետութիւն չէր ցանկանայ սրել յարաբերութիւնները Թուրքիայի հետ: Այդ իսկ պատճառով անիմաստ էր գառնում նաև Սոցինտերնի միջամտութիւնը (59):

Թուրքերի կողմից իրականացուած բարբարոսութիւնների դէմ: Նա նաեւ բացատրում էր նստաշրջանին, թէ ինչու է Հ.Յ. Դաշնակցութիւնը բարձրացնում քրտական հարցը: Հստ Ա. Զամալեանի՝ քիւրտ ժողովուրդը դեռեւս իր ներկայացուցիչը չունէր ինտերնացիոնալում, եւ իրենք պարտաւորուած էին զգում ներկայացնելու նրա շահերը, առաւել եւս, որ Հ.Յ. Դաշնակցութեան շարքերում շատ էին այդ ազգի ներկայացուցիչները, իսկ Մարտէլլում տեղի ունեցած համագումարի ժամանակ Սոցինտերնը յստակօրէն իր կամքն էր արտայայտել աւելի աշխոյժ ձեւուղ միջամտելու ճնշուած ժաղովուրդների ազգատագրական պայքարին: Այդ իսկ պատճառով նա պէտք է անտարբեր չմնար քրտերի պայքարի հանդէպ, առաւել եւս, որ Քիւրտիստանում մղուող անընդէջ կոիւներն իրենց մէջ պարունակում էին մեծ տէրութիւնների միջամտութեան եւ այդպիսով՝ տարածաշրջանում մեծ պատերազմի սկսման վտանգ: Ոչ պակաս կարեւոր հանգամանք էր նաեւ այն փաստը, որ Կոմինտերնի գործակալները, օգտուելով քրտերի մեկուսացուածութիւնից եւ անօգնական վիճակից, ջանում էին վերջիններիս գցել իրենց ազգեցութեան տակ: Դա նրանց թէեւ գանդալ, բայց յաջողուում էր, եւ Կոմինտերնի հետ արդէն համագործակցում էին չէյլս Շեմզին եւ Բեդիրխան Զադէն Այդ իսկ պատճառով Սոցինտերնի միջամտութիւնը կը քաջալերէր այն մարդկանց, որոնք թշնամաբար էին տրամադրուած Կոմինտերնի նկատմամբ (58):

Այսուհետեւ Ա. Զամալեանը ներկայացնում էր մարտական գործողութիւնների ընթացքը, թրքական զօրքերի կողմից քիւրտ բռնակցութեան նկատմամբ իրականացուած ոնիւնները, բոլշեվիկների երկդիմի քաղաքականութիւնը. նրանք սկզբում փորձեցին քրտական շարժումն օգտագործել իրանի եւ իրաքի դէմ, բայց երբ այն տապալուեց, սկսեցին բացայայտորէն օգնել քեմալականներին զէնք-զինամթերքով, հրետանիով, ինչպէս նաև մարտական զօրամասերով եւ ինքնամթիւններով: ՀՅԴ-ն, ի դէմս Ա. Զամալեանի, երկիւող էր յայտնում, որ Թուրքիան կարող է օգտագործել իրանական քրտերի օգնութիւնն իրենց թուրք ցեղակիցներին որպէս պատրուակ՝ իրան ներխուժելու համար:

Սակայն նստաշրջանը նախագահող Լուի Տը Բրուքերը, հասկանալով թէ ինչ մեծ բարդութիւն է պարունակում իր մէջ քրտական հարցը եւ իր հերթին բերելով ոչ պակաս հիմնաւոր պատճառաբանութիւններ, դէմ է արտայայտում, որ պէտքի Սոցինտերնը արծարծի քրտական խնդիրը միջազգային ատեաններում: Հստ նրա՝ քրտական հարցը նորութիւն է եւրոպայի սոցիալիստների համար, որոնք, անձանօթ լինելով արեւելան սովորոյթների տարբերութեանը եւրոպականից, գուղացութեան կացութեան հառաջացնուածում: Եւ յանդեւ աղդամութիւնը, որ Թուրքիան կարող է օգտագործել իրանական քրտերի ագութիւններով կարող էր կայացնել թուրք ցեղակիցներին որպէս պատրուակ՝ իրան ներխուժելու համար:

Թէեւ Ա. Զամալեանը փորձեց իր փաստարկներով հա-

կառակն ապացուցել, սակայն նստաշրջանի մասնակիցների մեծ մասը համամիտ էր Լուի Տը Բրուքերին: Արդիւնքում նստաշրջանը խոստովանեց Ազգերի Լիկայի միջոցով քրտերի օգտին խառնուելու անհնարինութիւնը: Նոյն բախտին արժանացաւ նաեւ Հ.Յ.Դաշնակցութեան՝ Քիւրտիստան յանձնաժողով ուղարկելու առաջարկը: Դրանց փոխարքն նստաշրջանը բաւարարուեց բանաձեւի ընդունմամբ, որտեղ դատապարտում էին թրքական բարերարութիւնները, թրքական զօրքերի կողմից իրանական սահմանի անօրինական խախտումները, Ազգերի Լիկայի անգործութիւնը եւ Կոմինտերնի գործունէութիւնը Քիւրտիստանում: Դրանով հարցը փակուեց (60):

Եզրակացութիւններ

- Հայ եւ Քիւրտ ժողովուրդների համար քաղաքական կարեւոր նշանակութիւն է ձեռք բերում այն անհերքելի իրողութեան խորը գիտակցումը, որ Արարատի ապստամբութեան շրջանում Հայոց Մայր Լեռան ծերպերին հաստատուած հայ-քրտական զինակցութեան արդիւնքում քեմալական Թուրքիան այդպէս էլ չկարողացաւ ուազմական միջոցներով ծնկի բերել ապստամբներին եւ նրա կանոնաւոր բանակը մի շարք ծանր, անգամ խայտառակ պարտութիւններ կրեց թուրքանակով ու զինուածութեամբ իրեն բազմակի անգամ զիջող քրտական անկանոն ուժերից ու նրանց միացած հայ մարտիկներից: Եւ միայն արտաքին աշխարհի հետ ապստամբների կապն ապահովող իրանի հանդէպ կիրառուած խորհրդա-թրքական ուազմաքաղաքական շանթաժի եւ ապստամբական ուժերի ամբողջական շրջափակման արդիւնքում է, որ նրանք տեղի տուեցին ու ստիպուած էին լքել իրենց մարտական դիրքերը:

- Արարատի ապստամբութիւնը, չնայած իր պարտութեանը, նկատելիօրէն բարձրացրեց քրտերի ազգային ինքնագիտակցութիւնը, ի չիք դարձրեց նրանց թրքացնելու ծրագրերը: Դա հանգեցրեց նրան, որ համախմականութիւնը, որը օսմաննեան սուլթանների համար հանդիսացել էր քրտերին իրենց ազգեցութեան տակ պահելու հօր լծակ, այլևս չիք գործում, եւ մահմետական քրտերն իրենց դաշնակց էին համարում քրիստոնեայ հայերին, որոնց հետ միասին ոչնչացնում էին մահմետական թուրքերին:

- Շնորհիւ նորայայտ արխիւտային նիւթերի՝ պարզ է դառնում, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գերակատարութիւնը Թուրքիայում 1920-ական թուականների երկրորդ կէսին ծաւալուած քրտական շարժման մէջ շատ աւելի մեծ ու նշանակալից է եղել, քան այն մինչ օրս ներկայացրել են արեւմտեան եւ խորհրդային հետազոտողները: Նրանք, ենեղով իրենց երկրների շահերից, հետազոտուամէն կերպ աշխատել են թերագնահատել ՀՅԴ ազգեցութիւնը եւ այն ներկայացնել միայն բացասական տեսանկիւնից. այն է ՀՅԴ-ի միջամտութիւնն աւելի վնասեց քրտերի պայքարին, քան օգնեց:

Մինչդեռ՝

- Հ.Յ. Դաշնակցութիւնը քրտերի պայքարին հաղորդեց գաղափարական ուղղուածութիւն, այն բարձրացրեց որակական նոր մակարդակի: Դրա շնորհիւ Հոյքունը կարողացաւ համախմբել քրտական հասարակութեան բոլոր շերտերին, հաշտեցրեց մինչ այդ թշնամի ցեղերին ու կուսակցութիւններին: Քրտերը, անկախ իրենց լեզուական, կրօնական եւ ցեղային պատկանելութիւնից, առաջին անգամ միաւորուեցին Անկախ Քիւրտիստանի գաղափարի շուրջ:

- Մեծ էր ՀՅԴ-ի գերը նաեւ կազմակերպական առումով: Նա քրտերին փոխանցեց իր հարուստ փորձը՝ կապի, դրամական միջոցների հայթայթման, մարտական ջոկատների կազմաւորման, հետախուզութեան, մամուլի հրատարակման գործում (71):

- Հ.Յ. Դաշնակցութեան շնորհիւ քրտական հարցը գուրս եկաւ միջազգային ասպարէզ: Եւրոպայում եւ ԱՄՆ-ում մեծ աշխատանք էր տարւում քրտերի անուան շուրջ դրական կերպար ձեւաւորելու համար, որոնց մինչ այդ արեւմտեան հասարակութիւնը ծանօթ էր միայն բացասական կողմից: Ճիշդ է Սոցինտերնի միջոցով ՀՅԴ-ին չյաջողուեց հասնել որեւէ էական որոշման, սակայն այդ աշխատանքները ուղի հարթեցին քրտական հարցի միջազգայնացման համար:

- Հ.Յ. Դաշնակցութեան մասնակցութիւնը քրտական շարժմանը իրանի համար նոյնպէս ունեցաւ դրական նշանակութիւն: ՀՅԴ-ի նշանակալի ազգեցութիւնը քրտական ցեղերի վրայ զերծ պահեց նրանց բոլշեվիկների եւ քեմալականների սաղբանքներից: Իրանի համար քրտական ցեղերը մշտական անհանգստութեան օճախից վերածուեցին յուսալի զինական ուժի: Դրա շնորհիւ կանխուեց նաեւ բոլշեվիկների եւ քեմալականների կողմից ծրագրաւորուած՝ իրանական քրտերի ներդրաւումը հակարիտանական գործողութիւնների մէջ, ինչն, անկասկած, առաջ էր բերելու Մեծ Բրիտանիայի համարժէք պատասխանը՝ իրանի համար ծանր հետեւանքներով:

Այս ամէնը պարզորոշ կերպով ապացուցում է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կարեւոր գեր է խալացել Քիւրտ ժողովրդի ազգային-ազատազրական պայքարի ծաւալման եւ նրա գաղափարախօսութեան բիւրեղացման գործնթացում, ինչն իր հերթին, 1920-1930-ական թուականների սահմանագծին, լուրջ անդրադարձ է ունեցել տարածաշրջանի տէրութիւնների, մանաւանդ ԽՍՀՄ-ի ու Իրանի յարաբերութիւններում՝ քրտական հարցը վերածելով տարածաշրջանային քաղաքականութեան լուրջ գործոնի:

Արամ U. Սայիեան

Արամ U. Սայիեան - գիտական հետաքրքրութիւններն ընդգրկում են 1920-1930-ական բուականների բրտական ապստամբութիւնների եւ բուրք-բրտական ու հայ-բրտական յարաբերութիւնների պատմութեան հիմնահարցերը:

Ծանօթագրութիւններ

- 1 Տե՛ս N. Dersini. Kürdistan tarihinde Dersim. Halep 1952. s. 255.
- 2 Տե՛ս A. Safrastyan. Kurds and Kurdistan. London, 1948, p. 84.
- 3 ՄԵՐՔԵՐՈՒՄ ըստ Լազար Մ. Ս. Կուրդիստան և կուրդական համայնքների 1923-1945 թ., Մոսկվա, 2005, ս. 105.
- 4 Տե՛ս Z. Silopi. Doza Kurdistan, Beyrut, 1969, s. 119.
- 5 Տե՛ս Ղարաբաղ Մ. Ա., Կորդեր Տուրցիա և հայություն ժամանակակից աշխարհում, Երևան, 1990, էջ 153:
- 6 Ղարաբաղ Մ. Ա., նշ. աշխ., էջ 153:
- 7 ՄԵՐՔԵՐՈՒՄ ըստ Վ. Նիկուտին. Կորդեր Տուրցիա և հայություն ժամանակակից աշխարհում, Մոսկվա, 1964, էջ 153:
- 8 Տե՛ս Silopi Z., նշ. աշխ., էջ 114, 116:45
- 9 Տե՛ս Ղարաբաղ Մ. Ա., նշ. աշխ., էջ 152:
- 10 Անելի մանրամասն տե՛ս Ղարաբաղ Մ. Ա., նշ. աշխ., էջ 152: Տե՛ս նաև Ա. Ակոպով. Կորդեր Տուրցիա և հայություն ժամանակակից աշխարհում, «Հայություն» ակադեմիական համակակից աշխարհագույն համաժողով, 1931, էջ 38:
- 11 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 2:
- 12 Թերեւս դա կապուած էր խորհրդային իշխանութիւնների հետ համագործակցելու շուրջ կասկածների հետ: Խմբ:
- 13 Անելի մանրամասն տե՛ս նոյն տեղում, թ. 7:
- 14 Տե՛ս նոյն տեղում, թ. 8:
- 15 Տե՛ս Վահան Բայրութիան, XX դարի 20-30-ական թուականների բրոտական սպասումբութիւնները և բուրքական յարաբերութիւնները, «Սերձաւոր և Միջին Արևելիքի երկրներ և ժողովրդներ», հաստ. XXI, էջ 16:
- 16 ԽՍՀՄ ձեւատրումից յետոյ ՌՍՖՌ-ի ՆԳԺԿ-ին կից ԳՊՈՒ-ի հիման վրա՝ 1923 թ. նոյեմբերի 15-ին ստեղծուեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների սովետին կից գործող ՕԳՊՈՒ-ն՝ Միացաւ պետրովյանութիւնը (CHK СССР)՝ պահպանելով քաղաքական ուստիկանութեան՝ չեկայի իր յայտնի գործառոյնները: Բայց Անդրֆեդերացիային կից գործող նրա անդրկովկասեան բաժնեմունքը կրում էր ԳՊՈՒ (ՊԲՎ) անուանումը:
- 17 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 119, էջ 7:
- 18 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1929, N 12, էջ 284:
- 20 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 11:
- 21 Տե՛ս նոյն տեղում, թ. 6:53
- 22 Տե՛ս Ղ. Ագաբեկով. Սեքրետնի տերրոր. Մոսկվա, 1996, ս. 206.
- 23 Այս մասին վերջերս բացայացուած փաստարդերի հիման վրա փրոֆ. Վ. Ղազախեցեանի կողմից շուտով կը տպագրուի առանձին ուսումնասիրութիւն: Խմբ:
- 24 Տե՛ս Ղ. Ագաբեկով, նշ. աշխ., էջ 332:
- 25 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թթ. 12-13:55
- 26 Ս. Վրացեան, Քաղաքական խնդիրները ՀՀ.Դ. 11-րդ Ըստանու ժողովում, «Դրօշակ», Փարիզ, 1929, N 4-5, ապրիլ-մայիս, էջ 76:
- 27 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 14:

- 28 Տե՛ս նոյն տեղում, թ. 14:
- 29 Նոյն տեղում, թ. 15:
- 30 Նոյն տեղում, թ. 3:
- 31 Անելայն հաւանականութեամբ խօսքը Վահան Փափազեանի (Կոմիի) մասին է:
- 32 Տե՛ս նոյն տեղում:
- 33 Տե՛ս և նոյն տեղում, թ. 17:
- 34 Ամենայն հաւանականութեամբ՝ Կարօ Սասունի:
- 35 Սասունագիտութեամբ թիվ 2 Սանուկը Իրանի դաշնակցական ցրանակներում յայսմի դրվագը Սանուկն է (Սանուկ Վարդանեան): Սագունով գիտեցի իր, ով հետազայում երկար տարիներ բնակուել է Շիրազ քաղաքում:
- 36 Նոյն տեղում, թ. 19:
- 37 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 21:
- 38 Տե՛ս և նոյն տեղում:
- 39 Տե՛ս Կարօ Սասունի, Քիրտ ազգային շարժումները և հայրական յարաբերութիւնները, Պերսիա, 1968, էջ 287:
- 40 Տե՛ս և Լազար Մ. Ս., նշ. աշխ., էջ 153:
- 41 Տե՛ս և նոյն տեղում, էջ 152:
- 42 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1930, N 8, էջ 189:
- 43 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 21:
- 44 Տե՛ս և նոյն տեղում, թ. 22:
- 45 Տե՛ս և նոյն տեղում, թ. 23:
- 46 Տե՛ս «Դրօշակ», 1930, N 8, էջ 218:
- 47 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 27:
- 48 Տե՛ս և նոյն տեղում, թ. 30:
- 49 Անելայն հաւանականութեամբ Դավիթ Փափազեանն է (1884 թ. Վան - 1961 թ. Թեհրան):
- 50 Ամենայն հաւանականութեամբ Գրիգոր Միհրաբեանն է (1899 թ. Երևան - 1960 թ. Թեհրան):
- 51 Տե՛ս և նոյն տեղում:
- 52 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 31:
- 53 Տե՛ս և Ավանեսով Ս. Ս. Պոլույուն հայություն աշխարհում, Երևան, 1963, ս. 59.
- 54 Սուրենի և Սաֆրազի ով լինելը հնարաւոր չեղալ պարզէ:
- 55 Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆ, ֆ. 1048, գ. 1, գ. 64, թ. 33:
- 56 Տե՛ս և նոյն տեղում, թ. 34:
- 57 Տե՛ս և Լազար Մ. Ս., նշ. աշխ., էջ 123:
- 58 Տե՛ս «Դրօշակ», 1930, N 9, էջ 220:
- 59 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1931, N 3, էջ 40:
- 60 Տե՛ս և Լազար Մ. Ս., նշ. աշխ., էջ 123:

Արարատի ֆրտական ապստամբութեան կազմակերպիչներէն՝ Վահան Փափազեան Կոմիտ

Վահան Փափազեան (Կոմս, Բժիշկ) (1876-1973) հայ ազգագրական շարժման յայտնի առաջնորդներից եւ ՀՅԴ ականաւոր ներկայացուցիչ:

Կենսագրութիւն

Վահան Փափազեանը ծնուել է 1876 թուականին Թաւրիզում, Վանեցու ընտանիքում: Ինը տարեկան հասակում հայրը՝ «շուշտակ» մականունով յայտնի եկեղեցական, քաղաքական գործիչ Տէր Մեսրոպ քահանայ Փափազեանը Սալմաստում դառնում է կաթողիկէների դաւադրութեան գոհը եւ վահանի դաստիարակութեամբ սկսում է քաղաքուել մեծ քոյրը՝ Աշխէնը: Նրանց ընտանիքը բազմանդամ էր՝ 10 երեխայ: Եղել են 6 եղբայր, կրտսերը Վահանն է: Նրա եղբայրներից է գրող Վրժանէս Փափազեանը: 1893 թուականին Թիֆլիսից տեղափոխում են նոր Նախիջեւան: Ցանկանալով ապրուստը ինքնուրոյն հոգալ 16 տարեկանում դառնում է մի հրեայ լուսանկարչի աշակերտ, իւրացնում արուեստը: Շուտով յարում է Հնչակեան կուսակցութեանը, սակայն Ալեքսանդրապոլում քրոջ որդու դաշնակցական Լեւոն Գրիգորեանի միջոցով ծանօթանալով կուսակցական մամուլին, հանդիպելով երկրից եկած Հայդուկներին նոր Նախիջեւան է վերադառնում կուսակցականապէս դաւանափոխուած: 1902 թուականին գարնանն արդէն Ֆեթերեսպուրկում ուսանող Փափազեանը խոյս տալով ձերբակալութիւնից փախչում է Ֆինլանտիա, ապա Շուեցարիա՝ ժնեւ: Դրօշակի խմբագրատանը հանդիպում է Արտաշէս Յովսէկիեանին՝ ապագայ հոչակաւոր Մալիսասին, Քրիստափոր Միքայէլեանին, Սիմոն Զաւարեանին: Նրանց յանձնարարութեամբ էլ, որպէս լուսանկարիչ եւ փստահելի ընկեր Գայլ Վահանի խմբի հետ գալիս է Կովկաս՝ պատրաստուելով մեկնել Վասպուրական: Նրան ընկերակցում էր Նիկոլ Պողոսեանը, ապագայ յայտնի իշխանը:

Մինչեւ սահմանանցումը վիրաւոր Հայդուկներից մէկին վիրակապող Վահանին կնքում են «բժիշկ» մականունով, իսկ յետագայում նրան կոչում են նաեւ «Կոմս»: Առանց լուրջ փորձութիւնների Վահանն ու իշխանը համում են Վահան: 1903 թուականին նոյեմբերին յաջող աշխատանքներ են տարւում կուսակցական կառոյցը Վահագում եւ նրա շրջակայ գաւառներում ամրապնդելու ուղղութեամբ:

Վահան Փափազեանը Օսմանեան խորհրդարանի պատգամաւոր (1908-1912)

Գաղափարական սրուածութիւնը հայկական երեք կուսակցութիւնների միջեւ չափազանց սրուած էր: Հայերի անմիաբանութիւնից օգտաւում էր թուրք իշխանութիւնը, որը սակայն հիմնական ուժերը կենտրոնացրել էր Սասունում, որտեղ 1904 թուականին սկզբին սկսած ինքնապաշտպանութիւնը տեսեց մինչեւ Մայիսի կէսերը: Աղթամար նահանջած հերոսներին Անդրանիկ Օզանեան, Գէորգ Զաւուշ, Սեպուհ, Սմբատ տեսակցում են Վահանն ու իշխանը:

1904 թուականի աշնանը Վահան է գնում Արամ Մանուկեանը եւ քարոզչական աշխատանքը, նոր թափ է ստա-

նում: Սակայն այս ոգեւորութիւնը կարճ է տեւում, ՀՅԴ Բիւրոն Արամ Մանուկեանին ուղարկել էր, ոչ թէ Կոմսի հնթակայութեան տակ աշխատելու, այլ նրա սխալները շտկելու, ինչից էլ նեղպատելով Վահան Փափազեանը որոշում է հեռանլ: 1905 թուականի Յունուարին Կոմսն ու Քեռին (Արշակ Գափափեան) ծպտուած թողնում են երկիրը, աւելի ուշ հասնում երեւան: Հայ-թաթարական բախումների ժամանակ Նիկոլ Դումանի հրամանով նա մեկնում է Նախիջեւան, Սարդիս Գոտապաշեանի ենթակայութեամբ կազմակերպելու ինքնապաշտպանութեան գործը: 1906 թուականի աշնանը նրան կրկին հրաւիրում են Վասպուրական: Հասնելով Վահան՝ անցնում է իր համար կարծես սովորական աշխատանքի: Գարնանը վերադառնում են նաեւ ՀՅԴ 4-րդ համագումարին մասնակցելու համար Վիեննա մեկնած Արամ Մանուկեանն ու հյխանը:

Սահմանադրական կարգերի հաստատումից յետոյ առաջին խորհրդարանական ընտրութիւններում Վասպուրականի հայութեանը յատկացուած էր մէկ տեղ: Օսմանեան խորհրդարանի երեսփոխանական ընտրութեան ժամանակ դաշնակցութեան Վահան կենտրոնական կոմիտէն առաջարկում է Կոմսի՝ Վահան Փափազեանի թեկնածութիւնը՝ իրը վաճեցու, քանի որ օրէնքով խորհրդարանի անդամ կարող էր ընտրուել միայն տեղացին, Արմենականները՝ Աւետիս Թիերգիպաշեանին: Բայց Կոմսը համաձայն չէր: «Անախորժանական մըլն էր ինձի համար, գրում է Կոմսը: Երբեք միտքէս անցած չէր նման պատասխանատուութեան տակ մտնել: Կը զգայի, որ անախորժ պարտականութիւն մըն էր՝ խառնուածքին բացարձակ անհամապատասխան, մանաւանդ, որ լեզուն ալ չէի գիտեր»: Միաժամանակ, նա գտնում էր, որ այդ պաշտօնի համար իր պատկերացումներով ամենայարմարը՝ Արամ Մանուկեանն էր՝ «իր յանդգնութեամբ, խորհրդարանական միջավայրի շուտով յարմարող՝ իր մատչելի եւ անկաշանդ բնաւորութեամբ, մանաւանդ որ քիչ շատ ալ թուրք-թաթարական լեզուով կրնար լաւ-գէշ արտայայտուիլ»: Սակայն վերջինս էլ կտրուկ հրաժարում է՝ տեղայի չինելու պատճառով: Յետագայում Կոմսը, ցաւուկ անդրադառնալով իր երեսփոխան ընտրուելու հարցին, կշտամբանքով վերյիշում էր Արամի մերժումը. «Այդ պարտականութեան (երեսփոխանի) մարդը Արամը կրնար լինել: Ինչո՞ւ չընդունեց: Զէ՞ որ իր խառնուածքով աննկուն, համարձակ ու անկաշանդ՝ յամառ պայքարող մըն էր, որ իր թիրի լեզուով իսկ կրնար խորհրդարանի բնեմն որոտալ բոցավառ խօսքեր՝ ուղղուած պետութեան վարիչներուն, ներկայացուցչական ամբողներու վրայ բազմած թուրք «երեւելիներուն», որոնցմէշ շատերու ձեռքերը հաւանաբար մաքուր չէին հայերունէն ու արցունքներուն»: «Ձախջախիչ» մէծամասնութեամբ Վասպուրականի կողմից Օսմանեան խորհրդարանի հայ պատգամաւոր ընտրուեց Վահան Փափազեանը, որը խոչը յաղթանակ տարաւ յատկացիս գաւառներում: Այդ մասին նա յետագայում յիշում է. «Մերինները հրծուանքի մէջ էին, իսկ ես տիսուր ու մտատանջ էի՝ իմ առջեւ բացուող այս նոր, անծանօթ եւ անախորժ կեանքին հանդէպ»: Վահանից մեկնելու նախօրեակին վ. Փափազեանը մէծ խոստումներ էր

շուայլում բոլորին: «Մենք, ձախակողմեան երեսփոխաններս, - ասում էր նա, - պատնէշի վրայ պիտի կանգնենք եւ կուրծք պիտի տանք դէպի ժողովութզը, դէպի հասարակական իրաւունքները, դէպի արդարութիւն ուղղուած հարուածներին»: Բայց նա նշանաւոր եղաւ միայն իր լուսթեամբ, այնպէս որ շատերի կողմից արժանացաւ «Համբ երեսփոխան» տիտղոսին:

1912 թուականի Դեկտեմբերի 21-ին Կոստանդնուպոլիսի հայոց ազգային ժողովը որոշում է ընդունում հայական հարցը բարձրացնել եւրոպական տէրութիւնների առաջ: Հիմնւում է Ապահովութեան խորհուրդ, որի նախագահը պատրիարք Արշարունին էր, քարտուղարը՝ Վահան Փափագեանը: Բայց Պատրիարքարանի նախագծից հայկական բարենորոգումների վերաբերեալ նախագծի ներկայացրեց նաև Պօղոս Նուապար Փաշան, որը դժգոհում էր պատրիարքարանի ներկայացրած նախագծից: Այս պայմաններում պատրիարքարանի կողմից Եւրոպա է գործուղւում եւ Պօղոս Նուապարի հետ բանակցութիւնների մէջ է մտնում Վահան Փափագեանը՝ նպատակ ունենալով հասնել փոխզիջումային տարբերակի ընդունմանը: Մէկ ու կէս ամիս տեւած բանակցութիւններից յետոյ Վահան Փափագեանը եւ Պօղոս Նուապարը հասնում են համաձայնութեան եւ ուռաւական գեսապանութեանը ներկայացնում երկկողմանի ընդունելի նախագծից: Ի վերջոյ 1914 թուականի Յունուարի 26-ին կնքում է ուսու-թրքական համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերեալ, որին, սակայն վիճակուած չէր իրագործուել, քանզի 1914 թուականից սկսուած առաջին համաշխարհային պատերազմը այն թողնում է անաւարտ:



Առաջին համաշխարհային պատերազմ

Վահան Փափագեանը Օգոստոսի 14-ին իտալական նաւի վերջին ուղերթով ճանապարհուած է Պաֆում, այնտեղից էլ Թիֆլիս, որտեղ հայութիւնը տարրուած էր կամատորական գնդեր կազմելու գործով: Հարկ է նշել, որ Կոմսը այն գործիչների թուին էր, որոնք դէմ էին այդ շարժմանը, համոզուած, որ այդ քայլով անտեղի գրգռելու են թուրքերին: Թերեւս նա ճիշտ էր, բայց գործընթացը կանգնեցնել արդէն անհնար էր: Պատերազմի սկզբում Մուշում, որի գաշնակցութեան ակումբում հանգրուանել էր Փափագեանը, եւ առհասարակ Տարօնում կեանքը խաղաղ էր: Թէեւ հայերը զանգուածարար խուսափում էին զինակոչչոց, տեղական իշխանութիւններն առաջմ չէին դիմում բռնի միջամտութիւնների: Վահան Փափագեանը իբրեւ Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր եւ Դաշնակցութեան պարագլուխ, գործակցում էր նրանց հետ, նոյնիսկ ընդդրկվում թիկունքի ուժերի կազմակերպման յանձնախմբում, սակայն փոխըմբռնում չկար եւ շահերի բախման պատճառով վերջնական խզումը մօտ էր:

Արեւմտահայերից ակնկալուած օգնութիւնը չստանալով՝ երիտթուրքերը անցնում են վճռական գործողութիւնների: Առաջին քայլը զինական խմբերը ցրելն էր, եւ երբ Ռուբէնն ու Կորիւնը կանխելով իրենց սպանութիւնը Կոմս գիւղում նախայարձակ լինելով՝ քաշւում են Սասունի լեռները, ամէն ինչ խառնուում է իրար: Տիփից դեռեւս չապաքինուած Փափագեանը եւս տեղի տալով ընկերների յորդորներին հեռանում է լեռները միանալու Ռուբէնին: Խակ Մշոյ գաշտում զինական ուժ գրեթէ չկար: 1915 թուականի գարնանը ուռաւական բանակը մտնում է Վասպուրական, հերթը համոզուած էին Տարօնին է, սակայն թուրքերը դեռ ոմբակոծում էին բոլորովին անպաշտպան Մուշն ու դաշտավայրի գիւղերը:

Վահան Փափագեանը, որ դեռ երէկ երեսփոխան էր,

Կոմս

պաշտօնական այր, գառնում է քսան հազար գաղթականների առաջնորդը. Տարօնի 200 հազար բնակչութիւնից փրկում է միայն 10 հազարը: Կոմսի ու Ռուբէնի խմբում, երբ հասնում են ուռաւներին մնացել էր մօտ 30 մարդ: Խուսական զօրականից ուղեւորում են հգիբը, ապա էջմիածին, որտեղ պատահական հանդիպում են Յովսէփ Արղութեանի կամաւորական գնդին: Կոմսը երեւանում հիւրընկալուում է հին բարեկամ Մալխսափ տանը, ապա մեկնում Թիֆլիս, իսկ Վասպուրականի վերագրաւումից յետոյ նշանակում Բարեգործական Միութեան ներկայացուցիչ Վանում:

Վահան Փափագեանը մի շարք այլ գործիչների՝ Արամ Մանուկեանի, Արտակ Դարբինեանի, Անդրանիկի հետ նախաձեռնում է 1917 թուականի Արեւմտահայերի առաջին համագումարը: Վահան Փափագեանը, Լեւոն Շանթի եւ Անդրանիկի հետ ընտրում է համագումարի նախագահ: Առաջին համագումարի որոշումները կենսագործելու նպատակով ընտրում են զեկավար մարմիններ Արեւմտահայ մեծ ու փոքր ազգային խորհուրդներ եւ Արեւմտահայ գործադիր բիւրո: Վահան Փափագեանը ընտրում է այդ երեք մարմիններում, միաժամանակ հանդիսանալով Ազգային բիւրոյի նախագահ: Այս յօյսի եւ պատրանքի նոր շրջանը վլուգուում է հոկտեմբերեան յեղափոխութեամբ: Հապճեպ զօրակոչով հառաքուած է արեւմտահայերից կազմուած գունդ, որի կազմակերպչական հարցերով զբաղւում է Ապահովութեան խորհուրդը Վահան Փափագեանի ղեկավարութեամբ, գրամանտարը է նշականակուում Անդրանիկը: Համատարած բարոյալքումը կամեցնելու համար շատ գործիչներ մեկնում են ճակատ, Վահան Փափագեանը գնում է Կարս, Սարիղամիշ, երեւան, Ալեքսանդրապոլ: Համընդհանուր նահանջի օրերին որոշում է Ապահովութեան խորհուրդը Թիֆլիսից տեղափո-

իեկ Հիւսիսային Կովկաս, բազմահազար գաղթականների հետ նա էլ է հասնում Վլադիկավկազ, ապա Կիւլավոդսկ, Եկատիրինողար, որտեղ էլ տեղեկանալով կովկասեան երեք հանրապետութիւնների անկախութեան մասին վերադառնում է Թիֆլիս:

Հայաստանի Առաջին Հանրապետութիւն

1918 թուականի վերջին Փարիզից ստացւում է Պօղոս Նուպարի հրաւերը, որպէս Արեւմտահայութեան Ապահովութեան խորհրդի նախագահ՝ մասնակցելու Ազգային համագումարին. 1919 թուականի Փետրուարի 24-ից Ապրիլի 22-ին: Վահան Փափազեանն ու Աւետիս Թերզիպապեանը կազմում եւ հայութեան երկու հատուածները ներկայացնող պատուիրակութիւններին են տրամադրում «Վնասուց» հատուցման գեկուցագիրը: Ինչպէս ինքն է գրում. «Մեր պահանջը Թուրքիայէն 20 միլիառ Քրանկի կը հասնէր»: Վահան Փափազեանը շուտով վերադառնում է Հայաստան: Ընտրուել էր խորհրդարանի պատգամաւոր, այս անդամ արդէն անկախ Հայաստանի օրէնսդիր խորհրդի անդամ: Նա ղեկավարում էր ելեւմտական (պիւտճէ) յանձնաժողովը:

Շուտով նրան կրկին հրաւիրում են Փարիզ, ապագայ Սեւրի դաշնագրով նախատեսում էր Հայաստանին ելք դէպի Սեւ ծով, մանրամասնութիւնները պիտի ճշգէր յատուկ յանձնաժողովը, որում Փարիզում Հայաստանի պատուիրակութեան զինուորական կցորդ զօրավար Կոկանեանի առաջարկով ընդգրկում է նաեւ Կոմսի անունը: Նա այդ օրերին կրկին Տիֆով հիւանդ էր եւ միայն Օգոստոսի սկզբին կազդուրուելուց յետոյ է կարողանում մեկնել: Ի դէպ նոյն հիւանդութիւնից մահացել էր եղբայր՝ Վրթանէս Փափազեանը: Փրոֆեսոր Խաչարեանի հետ Փարիզ են հասնում Սեպտեմբերին, գեռեւս 1920 թուականի Օգոստոսի 10-ին կնքուած Սեւրի պայմանագրին յաջորդում է Սեպտեմբերի 23-ին սկսուած հայերի համար կործանարար հայ-թրքական պատերազմը:

Կեանքի յետագայ տարիները

Փափազեանն այլեւս հայրենիք չի վերադառնում: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ շարունակում է աշխատել պատուիրակութեան կազմում: Նրա եւ Հայաստանի Հանրապետութեան տարագիր կառավարութեան անունից բազմաթիւ հանդիպումների, բանակցութիւնների է մասնակցում Թուրքիայում հայկական օճախ ստեղծելու, գաղթականութեանը օժանդակելու եւ այլ հարցերով: 1921 թուականի Մայիսին ընտանիքով մեկնում է Թերլին, Գերմանիայի աջակցութեամբ թուրքերից զիջումներ կորզելու եւ պոշեւիկների հետ բանակցութիւնների եզրեր գտնելու համար: Նախ հայկական դեսպանատանը հանդիպում է ՀՀ դեսպան Կրիստիլահին, օգնական Լիպարիտ Նազարեանի, Արշակ Ջամալեանի հետ, ապա հիւրընկալում դրկտոր Յոհաննէս Լեփախուսին, սովետական դեսպանատանը տեսակցում պողեւիկ Ալեքսանտր Բեկպաղեանին, դեսպան Կրասինին: Սակաւաթիւ նիւթերից յայտնի է, որ Կոմսը իբրև ՀՅԴ լիազօր ներկայացուցիչ մասնակցել է քրոսական ազգային Հորփիում կազմակերպութեան հետ տարուող բանակցութիւններին: Վերջինս Արարատ Երան յարակից տարածքներում բռնկուած քրտական ապստամբութեան կազմակերպիչն էր: Ի դէպ հարկ է նշել, որ երեք ղեկավարներից մէկը Զիլամ պէյլ հայ էր՝ Արտաշէս Մուրագեան: 1927 թուականի Հոկտեմբերի 29-ին Պէյրութում միացեալ Հայաստանի եւ անկախ Քիւրտիստանի համար համատեղ պայքարի մասին կնքում է քաղաքական եւ զինական դաշինք: Ապստամբութիւնը ճնշում է 1930 թուականի քառամսեայ մարտերից յետոյ: Վահան Փափազեանի կեանքից յայտնի է նաեւ, որ նա 1942 թուականին անդամակցել է Պերլինի Հայոց Ազգային կոմիտէին:

Երկրորդ աշխարհամարտի աւարտից յետոյ կրկին տեղափոխում է Պէյրութ եւ մինչեւ կեանքի վերջը ապրում է այնտեղ: Վահան Փափազեանը վախճանուել է 1973 թուականին, 97 տարեկանում՝ ապրելով դառնութիւններով, յաղթանակներով, ուրախութիւններով ամբողջ մի դար, հայրենիքից հեռու, Հայաստանի կարօտը սրտում:

www.horizonweekly.ca

H O R I Z O N
Hebdomadaire arménien
A r m e n i a n W e e k l y
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

horizon

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachejian
Tél.: (514) 332-3757
Télécopieur / Fax (514) 332-4870
E-Mail: horizonweekly@bellnet.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada -
ISSN 0708580X
PAP - N. d'enregistrement 10925

Փարիչ Խոմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական
պատասխանատու
Սիլվա Պաշողճեան
Քարտուզար՝
Մարինա Տէր Խաչատրյեան
Սրբագրիչ՝
Սոնա Թիգրիսեան Կէտիկեան



Unit 6 - 366 Bloor Street East Toronto, ON M4W 1H4
www.thereliableprinter.com • info@thereliableprinter.com